ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՎԱՆԱՁՈՐԻ Խ.ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 9 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿԻ
ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ 2024-2029թթ

Հաստատության հասցե՝ Զորավար Անդրանիկի 71
Հաստատության հեռախոսահամար՝ 2 91 69
Էլեկտրոնային հասցե՝ vanadzor9dproc@mail.ru
Հաստատության ինտերնետային կայքի հասցեն vanadzor9@schools.am

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ.....5

2. ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ . ՈՒԺԵՂ ԵՎ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ 8

2.1 Հաստատության համագործակցությունը տեղական ինքնակառավարման մարմինների, ծնողական համայնքի, կրթության կառավարման մարմինների, շահառու կազմակերպությունների հետ 13

2.2 Հաստատության կառավարման մարմնի և տնօրենի համագործակցության վերլուծություն ..14

2.2 Սահմանված նպատակի և խնդրի համապատասխան գործողությունները 16

2.3 Մանկավարժական համակազմի մասնագիտական որակների ներկայացումը.....21

2.4 Մանկավարժական համակազմի մասնագիտական որակների զարգացումն ապահովող միջոցառումները: 28

2.5 Օգտագործվող ՏՀՏ և կրթական այլ տեխնոլոգիաների և նորարությունների ներկայացում 31

2.6 Չափորոշչային պահանջներին համապատասխան կրթության որակի վերլուծություն.....32

3. ՆԵՐԱՌԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ.....37

3.1 Հաստատությունում ներառական կրթության և հավասարության ապահովում.....38

4. ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԵՎ ԽՆԴԻՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ.....39

4.1 Նոր կրթական տեխնոլոգիաների, մոդելների և ՏՀՏ գնահատման գործիքների ներդրում 39

4.2 ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ.....49

4.3 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ 53

ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԿԱՏ ԱՐՄԱՆ ԱՄԵՆԱՄՅԱ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ.....55

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐՆ ՈՒ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ.....55

Ուսուցիչը հպվում է հավերժությանը. ոչ ոք չի կարող ասել, թե երբ կավարտվի նրա ազդեցությունը:

Հենրի Ադամս

1918 թվականին հայերենն օրենքով ճանաչվեց պետական լեզու: Ձևավորվեց պետական կրթական համակարգը: Թույլատրվեցին նաև մասնավոր դպրոցները: Դպրոցն ավելի աշխարհականացավ: Առաջին Հանրապետության ղեկավարները դիմեցին հայ մտավորականությանը՝ մասնակից լինելու կրթական համակարգի ձևավորմանը: Շատ գործիչներ՝ Հ.Թումանյանը, Մ.Սարյանը, Հ.Աճառյանը և ուրիշներ արձագանքեցին և մասնակից դարձան կրթության համակարգի ձևավորմանը: Գրեթե բոլոր գյուղերում սկսեցին գործել ծխական-տարրական դպրոցներ: Այդուհանդերձ, դպրոցական կրթական համակարգում առանձնապես զարգացում չեղավ: Թերևս ամենակարևոր իրադարձությունը 1919 թվականին Երևանի պետական համալսարանի բացումն էր Ալեքսանդրապոլում:

Կրթության բնագավառում պետական քաղաքականության հենքը ազգային դպրոցն է, որի գլխավոր նպատակը մասնագիտական պատշաճ պատրաստվածություն ունեցող և համակողմանիորեն զարգացած, հայրենասեր, պետականամետ քաղաքացու դաստիարակությունն է:

Դեռևս հնագույն ժամանակներից մեզ համար մշակույթն ու գիտությունը ծառայել են նպատակ և միջոց ազգային հարատևման համար: Մեր երկրի հազարամյա պատմությունը ցույց է տվել, որ հայն իր ինքնությունը պահպանել է գիր ու գրականության, մշակույթի ու դպրոցի շնորհիվ:

Շարունակաբար զարգացող ու փոփոխվող աշխարհում սեփական տեղը ունենալու համար անհարժեշտ է լինել մրցունակ, ունենալ հստակ քայլերի ալգորիթմ: Այդ նպատակի հիմքը ազգային հենքի վրա զարգացող դպրոցն է, նորագույն գիտելիքներով, կարողություններով ու կարողունակություններով քաղաքացին:

Դպրոցի զարգացման ծրագիրը ռազմավարական փաստաթուղթ է, որը սահմանում է 2024-2029 թվականների դպրոցի զարգացման հիմնական ուղղություններն՝ արդի պետական կրթական քաղաքականության պահանջներին համապատասխան, հաշվի է առնված կրթական հաստատության ինքնազարգացման ներուժը :

Այսպիսով, սույն զարգացման ծրագրում փորձ ենք կատարել ուրվագծել հենց այսպիսի

կրթական միջավայր ունենալու մեր տեսլականը՝ զերծ մնալով սին ու դատարկ ճոռոմաբանություններից կամ ուղղակի ձևակերպված մտքերից: Այդ նպատակով՝

- կատարվել է ուժեղ և թույլ կողմերի համակողմանի վերլուծություն՝ ըստ ոլորտների,
- սահմանվել են հստակ նպատակներ՝ առաջադրելով դրանց իրականացման կոնկրետ խնդիրներ, ժամկետներ, անհրաժեշտ մարդկային և նյութատեխնիկական ռեսուրսներ,
- ներկայացվել են զարգացման ծրագրի իրականացման հնարավոր խոչընդոտները, ռիսկերը՝ սահմանելով դրանց մեղմմանն ու չեզոքացմանն ուղղված գործողություններ,
- ըստ ոլորտների սահմանվել են ուսումնական հաստատության զարգացման ծրագրի արդյունքների չափման մեխանիզմներն ու գործիքները,
- մշակվել են ԴԶԾ-ի կատարման ամենամյա հաշվետվության կատարողական ցուցանիշներն ու պահանջները:

Այսպիսով, հիմք ընդունելով ընդունելով ՀՀ ԿԳՄՍ նախարարի հրամանով հաստատված ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատության զարգացման ծրագրի մշակման պահանջները և ձևաչափը, զարգացման ծրագրի փորձաքննության չափանիշները, դպրոցում իրականացվող ներքին և արտաքին գնահատման չափանիշները, մանկավարժական կոլեկտիվի, սովորողների և ծնողների հետ իրականացված քննարկումները, դպրոցի առաջնային կարիքները, ոլորտին վերաբերվող մի շարք իրավական ակտեր՝ մշակվել է «Վանաձորի Խ. Աբովյանի անվան թիվ 9 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի 2024-2029թթ. զարգացման ծրագիրը, որը դպրոցի վարած քաղաքականության հիմքն է, որակյալ ու կրթական ներկայիս միտումներին համապատասխանող դպրոց ունենալու տեսլականը:

1. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Դպրոցը հիմնադրվել է 1953թ.՝ որպես «Խաչատուր Աբովյանի անվան թիվ 9 միջնակարգ դպրոց»: Երկրաշարժից հետո՝ 1999թ., դպրոցի շենքի տեղում կառուցվել է նոր երկհարկանի շենք, իսկ 2003թ. կատարվել է դպրոցի անվանափոխություն՝Լոռու մարզի «Վանաձորի Խ. Աբովյանի անվան թիվ 9 հիմնական դպրոց» ՊՈԱԿ:

Հանրակրթական ուսումնական հաստատության պետական ռեգիստրում գրանցման համարը	26.210.02084
Գրանցման ամսաթիվ	2003.01.22
Հանրակրթական ուսումնական հաստատության շինության բնութագիրը	ոչ տիպային
Հանրակրթական ուսումնական հաստատության հարկայնությունը	երկհարկանի
Հանրակրթական ուսումնական հաստատության տիպը ըստ իրականացվող հիմնական ծրագրերի	հիմնական
Հանրակրթական ուսումնական հաստատության տիպը ըստ իրականացվող կրթական ծրագրերի աստիճանի	տարրական/1-4/, հիմնական/5-9/
Հանրակրթական լիցենզիայով սահմանված աշակերտների թիվը	197
Աշխատանքային շաբաթը	հնգօրյա
Աշխատանքային ռեժիմը	միահերթ
Շինության ջրամատակարարումը	շուրջօրյա
Շինության կոյուղացումը	կենտրոնացված/բարվոք/
Ջեռուցման ձևը, (վառելիքի տեսակը)	լոկալ-գազ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԼԻՑԵՆԶԻԱ
№ 0045
№ 0050
Տարրական
Հիմնական
14 հուլիսի 2010 թ.

Կրթական նոր տեխնոլոգիաների ներդրմամբ, կրթության անհատականացման շնորհիվ որակյալ կրթություն ստանալու համար անհրաժեշտ պայմաններ:

Հետագա կյանքում սովորողների ինքնահաստատման համար անհրաժեշտ իմացությունների ձեռքբերման բարենպաստ կրթական միջավայր:

Համաշխարհային մշակույթի և այլ երկրների իր հասակակիցների հետ անմիջական շփումների միջոցով ծանոթացում , օտար լեզուների և բնագիտական առարկաների որակյալ ուսուցում:

Դպրոց, որտեղ հաջողությամբ կարող են սովորել բոլորը:

Յուրաքանչյուր սովորողի կարիքներին համահունչ անհրաժեշտ ուշադրություն:

ԿԱՊԿՈՒ և ներառման կարիք ունեցող աշակերտի համար իր զարգացման առանձնահատկություններին համարժեք կրթություն ապահովում, համապատասխան միջավայրի ձևավորում:

Ձևավորել անհատականություն, ով կգիտակցի հայրենիքի և պետականության արժեքը:

Դաստիարակել հայ, ով բազմազգ մոլորակում գիտակցի իր ազգային յուրահատկությունը, մշակույթի բացառիկությունը և գիտակցի իր՝ պահպանողի և փոխանցողի դերը:

Ձևավորել ինքնուրույնություն, մեդիագրագետ , համարձակ երազող , սեփական տեսակետը բարձրաձայնող , քննարկելու , խոսելու և համագործակցելու պատրաստ անհատ:

Փոխանցել հիմնարար գիտելիքներ:

Ստեղծել պայմաններ ուսումնահետազոտական գործունեության համար:

Առաջին հարկ			Երկրորդ հարկ		
Տարածքի անվանումը	**Չափը՝ մ2**	**Փաստացի վիճակը**	**Տարածքի անվանումը**	**Չափը մ2**	**փաստացի վիճակը**
Ռեսուրս կենտրոն	22	լավ	Ուսուցչանոց	33,6	լավ
Բուժկետ	8	բավ	Տնօրենի աշխատասենյակ	33,6	լավ
Դասասենյակ 1	33,6	լավ	Ընդունարան	8	լավ
Դասասենյակ 2	33,6	լավ	Լաբորատորիա	30	բավ.
Դասասենյակ 3	33,6	լավ	Գրադարան	38	բավ.
Դասասենյակ 4	33,6	լավ	Կերպարվեստի սենյակ	22	լավ
Դասասենյակ 5	33,6	լավ	Արմաթ լաբորատորիա	33,6	լավ
Դասասենյակ 7	33,6	լավ	Համակարգչային	33,6	բավ
Ճաշարան	33,6	բավ.	Դասարան 6	33,6	լավ
Խոհանոց	33,6	լավ	Դասարան 8	33,6	լավ
Կաթսայատուն	6	լավ	Դասարան 9	33,6	լավ
Սանհանգույց 1,2,3	35,9 միասին	բավ.	ՆԶՊ-ի դասասենյակ	22	բավ.
Հաշվապահի սենյակ	12	լավ	Զենքի պահեստ	8	լավ
Էլեկտրականության սենյակ/շիտ/	6	բավ.	Սանհանգույց	12,6	բավ.
			Սանհանգույց1,2/միասին/	12,6	բավ.

2. ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ . ՈՒԺԵՂ ԵՎ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ

2013-2014 ուստարվանից գործում է որպես հիմնական դպրոց: Աճող սերնդի հոգևոր, ֆիզիկական և սոցիալական ունակությունների համակողմանի ու ներդաշնակ զարգացումը հանրակրթության կարևորագույն նպատակներից է: Ուստի հաստատության խնդիրն է՝ ապահովել անվտանգ ուսումնական գործընթացի իրականացումը և սովորողների հոգևոր, ֆիզիկական ու սոցիալական լիարժեք բարեկեցությունն և համակողմանի զարգացումը:

Հաստատության գործունեության լիարժեք գնահատման գործընթացը ներառում է ուսումնական միջավայրի անվտանգության գնահատումը, որը վերաբերում է ոչ միայն սովորողների անվտանգ և առողջ կենսագործունեությանը, այլև ուսուցիչների, վարչական ու սպասարկող անձնակազմի աշխատանքի, կյանքի և առողջության պահպանման համար անվտանգ պայմաններ ապահովելուն: Սա առաջին հերթին արտահայտում է պետության և շահառու այլ խմբերի դրական վերաբերմունքը դպրոցի, կրթության նկատմամբ: Բացի այդ, բարեկարգ դպրոց ունենալն ու հարմարավետ ուսումնական պայմանների ապահովումը լրացուցիչ խթան է սովորողների մոտիվացիայի բարձրացման, դպրոցը սիրել տալու համար, ուստի կարևորում ենք հնարավոր բոլոր ռեսուրսների օգտագործումը՝ միտված առավել բարեկարգ, հարմարավետ ու ապահով շենքային պայմաններ ունենալուն:

Տվյալներ դասասենյակներում սեղան-նստարանների դասավորվածության և թվի վերաբերյալ.

Դասարանների թիվը	**2020-2021 ուստարի**	**2021-2022ուստարի**	**2022-2023ուստարի**	**Փոփոխությունների դինամիկան (աճ կամ նվազում)**
1 -ին դասարան	1	1	1	հաստատուն
2-րդ դասարան	1	1	1	հաստատուն
3-րդ դասարան	1	1	1	հաստատուն
4 -րդ դասարան	1	1	1	հաստատուն
5-րդ դասարան	1	1	1	հաստատուն
6-րդ դասարան	1	1	1	հաստատուն
7-րդ դասարան	1	1	1	հաստատուն
8-րդ դասարան	1	1	1	հաստատուն
9-րդ դասարան	1	1	1	հաստատուն
ընդամենը	*9*	*9*	*9*	*հաստատուն*

Տվյալներ յուրաքանչյուր դասասենյակներում մեկ սովորողին ընկնող մակերեսի վերաբերյալ.

Դասասենյակի համարը	Դասասենյակի մակերեսը (քմ)	Մեկ սովորողին ընկնող մակերեսը(քմ)	Նորմերից պակաս կամ ավել մակերեսը (քմ)
Դասասենյակ N1	36 քմ	2.4	-0.4
2 -դասասեն.	36 քմ	1.8	-0.4
3 -դասասեն.	36 քմ	1.5	-04
4 -դասասեն.	36 քմ	2	-0.6
5-դասասեն.	36 քմ	3.6	-0.5
6 -դասասեն.	36 քմ	1.1	-0.5
7 -դասասեն.	36 քմ	1.3	-0.3
8 -դասասեն.	36 քմ	1.7	-0.4
9 -դասասեն.	36 քմ	1.6.	-0.6

Տվյալներ հաստատության գրադարանի և դրա գործունեության մասին.

Ցուցանիշ	Տվյալներ
Գրադարանի տարածքը ք.մ-ով	38քմ
Գրադարանում համակարգիչների թիվը	1
Գրադարանում ինտերնետին միացված համակարգչների թիվը	1
Գրադարարանում կամ ընթերցասրահում նստատեղերի թիվը	14
Գրադարանային ֆոնդում առկա գրքերի (բացառությամբ ՀՀ ԿԳ նախարարության կողմից երաշխավորված հիմնական դասագրքերի) ընդհանուր թիվը, այդ թվում	1900
Գեղարվեստական գրքերի թիվը	2530
Տեղեկատվական գրքերի թիվը (բառարաններ, հանրագիտարաններ, ատլասներ և այլն)	131
Ուսումնամեթոդական գրքերի թիվը	44
Ամսագերի թիվը	110
Գրադարանից միջինում ամսեկան օգտվողների թիվը	58

Տվյալներ հաստատության ուսումնական լաբորատորիաների, կաբինետների և դահլիճների վերաբերյալ.

Լաբորատորիաներ, կաբինետներ և դահլիճներ	*Առկա գույքը, լաբորատոր սարքավորումները, պարագաները*	*Ուսումնա-նյութական, ուսումնադիդակ տիկ նյութերը*	*Լրացուցիչ, գույքի, սարքավորումների, պարագաների նյութերի կարիքը*
Ֆիզիկայի լաբորատորիա, կաբինետ	Էլեկտրական մեք. Ուժաչափ,	Պաստառներդաս ագրքեր	Նոր չափիչ սարքեր
Քիմիայի լաբորատորիա, կաբինետ	Փորձանոթներ, Կոլբա, Սպիրտայրոց	Պարբերական աղյուսակ	Լվացարան Սպիրտայրոց Հայտանյութեր Ալկալիներ Կշեռք՝ կշռաքարերով
Կենսաբանության լաբորատորիա, կաբինետ	Հերբարիում, Մարդու օրգանների մոդելներ Պաստառներ	Սկավառակներ Էլ.դասեր	Ցուցանմուշներ
Աշխարհագրության լաբորատորիա, կաբինետ			Համակարգիչ Պրոեկտոր Աշխարհի ֆիզիզկական քարտեզ
Պատմության կաբինետ	Քարտեզներ Պաստառներ		Ցուցանմուշներ
Ռազմագիտության	Ուսումնական զենք	Պաստառներ	Լրացուցիչ զենք

Կաբինետ	**Զինամթերք**		
Համակարգչային լաբորատորիա, կաբինետ	9 համակարգիչ 1տպիչ սարք	Էլ.դասերի սկավառակներ	Համակարգիչներ Պրոեկցիոն և տպիչ սարքեր
Օտար լեզուների լինգաֆոնային կաբինետ		Այբբենարան Պաստառներ	
Արհեստանոց (նշել ինչպիսի)	-	-	-
Միջոցառումների դահլիճ	-	-	-
Մարզադահլիճ	-	-	-
Այլ			

Ուսումնական հաստատության շենքային պայմանների վերլուծությունը.

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
Լուսավոր դասասենյակներ	Դպրոցի շենքը ոչ տիպային է, հարմարեցված, առարկայական դասասենյակների համար համապատասխան տարածք առկա չէ:
Ուսումնական հաստատության շենքը մասնակի վերանորոգված է:	Ուսումնական հաստատության գույքը ենթակա է հիմնանորոգման կամ փոփոխման:
Ուսումնական հաստատության շենքի շահագործումը համապատասխանում է շահագործման անվտանգության նորմատիվներին	Ուսումնական հաստատությունը չունի ցանկապատ, որը խիստ վտանգավոր է, քանի որ դպրոցը գտնվում է արագընթաց փողոցի անմիջական հարևանությամբ, և աշակերտների շարժը դպրոց և ամբողջ ընթացքում խիստ լարված և անհանգիստ վիճակում է պահում դպրոցի ողջ մանկավարժական կոլեկտիվին, մինչև աշակերտներին տուն ճանապարհելը:
Ուսումնական հաստատության շենքում առկա են դեպի դուրս բացվող պահուստային ելքեր:	
Արտակարգ իրավիճակներում հատուկ ծառայությունների մեքենաները կարող են անարգել մոտենալ հաստատության շենքին:	Արագընթաց փողոցինմոտ գտնվելը կարող է խոչընդոտ հանդիանալ
Ուսումնական հաստատության տարածքը մաքուր է, իսկ լաբորատորիաներում օգտագործվող այրվող և այլ վտանգավոր նյութերի թափոնները, աղբը կանոնավոր հավաքվումեն հատուկ աղբարկղներում և դուրս են բերվում հաստատության տարածքից:	Նյութատեխնիկական բազան, զննական պարագաները, դիդակտիկ նյութերը, սպորտային մարզագույքը, ԲՏՃՄ առարկաների դասավանդման համար անհրաժեշտ նյութերն ու արքավորումներն ունեն հարստացման, համալրման կարիք:
Ուսումնական հաստատության շենքը հարմարեցված է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք (այսուհետ՝ ԿԱՊԿՈՒ) ունեցող սովորողների անվտանգ տեղաշարժ և ուսուցում ապահովող պայմաններին (թեք հարթակներ, լայն դռներ և այլն):	Աշակերտական սեղանները, աթոռները շատ հին են և գտնվում են անբարվոք վիճակում, գրատախտակները հին են և մաշված, փոխարինման կարիք կա:
Ուսումնական հաստատության միջանցքների հատակները սայթաքուն չեն:	Կահավորման և բարեկարգման ենթակա է ուսուցչանոցի գույքը: Ուսուցչանոցն ապահովված չէ ինտերնետ կապով և համակարգչով, ինչի անհրաժեշտությունը կա:
Ուսումնականհաստատությունում	Անհրաժեշտություն կա մասնագիտական

սովորողների թիվը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատած տարածքների հաշվարկման նվազագույն նորմատիվներին և հաստատության լիցենզիայով սահմանված սահմանային տեղերին:	դասասենյակների ստեղծումը
Ուսումնական հաստատության սովորողները «Ֆիզկուլտուրա» առարկայի ուսումնական դասընթացները չեն անցկացնում մարզադահլիճում, քանի որ մարզադահլիճը շինարարական փուլում է	Դպրոցը չունի ժամանակակից պահանջներով կահավորված լաբորատորիա, առարկայական սենյակներ, միջոցառումների դահլիճ:
Ուսումնական հաստատության անձնակազմը և սովորողները տիրապետում են արտակարգ իրավիճակներում գործելու վարքականոններին:	
Ուսումնական հաստատությունն ապահովված է լոկալ ջեռուցման անվտանգ համակարգով:	Դպրոցի ջեռուցման համակարգը ձմռան ամիսներին լիարժեքորեն չի կարողանում ապահովել սահմանված ջերմաստիճանը և կարիք ունի տաքացուցիչների համալրման:
Ուսումնական հաստատությունն ապահովված է շուրջօրյա հոսող խմելու ջրով:	
Ուսումնական հաստատության բոլոր սանհանգույցներն ապահովված են շուրջօրյա հոսող ջրով և հիգիենայի պարագաներով (օճառ, թուղթ և այլն):	Սանհանգույցներից 2-ն են նորոգված և հարմարեցված, մյուս 4-ը կարիք ունեն վերանորոգման և հարմարեցման կարիք, սանհանգույցներում հոսող ջրի խնդիր կա:
Ուսումնական հաստատությունում առկա է սննդի կետ, որը համապատասխանում է սանտարահիգիենիկ պայմաններին:	Ճաշարանում տեղադրված են շախմատ դասասենյակի եղանները, աթոռները,որոնք փոխարինման կարիք ունեն(7 սեղան, 40 աթոռ),որի արդյունքում շախմատ առարկայի գույքը կտեղադրվի շախմատի դասասենյակում՝դասասենյակ հատկացնելու դեպքում:
Ուսումնական հաստատությունում առկա է բուժկետ, և կարող է տրամադրվել առաջին բուժօգնություն	բժշկական առաջին օգնության պարագաների մասնակի բացակայություն
Դպրոցի պրոյեկտորը հաճախակի կիրառվում է դասերի ժամանակ: Ժամանակակից դասը անհնար է պատկերացնել առանց տեխնիկական միջոցների կիրառման:	Գրադարանն ունի ժամանակակից գրականությամբ համալրեվելու կարիք:

2.1 Հաստատության համագործակցությունը տեղական ինքնակառավարման մարմինների, ծնողական համայնքի, կրթության կառավարման մարմինների, շահառու կազմակերպությունների հետ

Դպրոցում գործում է կանոնադրության համաձայն ձևավորված կոլեգիալ կառավարման մարմինը՝ խորհուրդը:

Դպրոցում գործում են կանոնադրության համաձայն ձևավորված խորհրդակցական մարմինները՝ մեթոդական միավորումներ, մանկավարժական խորհուրդ, ծնողական խորհուրդ աշակերտական խորհուրդ, որոնք կանոնավոր գումարում են նիստեր և կազմակերպում աշխատանքները:

Դպրոցը գործուն մասնակցություն ունի համայնքի հիմնախնդիրների լուծմանը՝ աշակերտներին ներգրավելով այդ գործընթացում՝ որպես կամավորներ:

Ծնողական խորհրդի հետ տարվող աշխատանքը՝ սովորողների հաճախումների, ուշացումների և վարքագծային շտկումների ուղղությամբ, պասիվ ծնողներին ինտեգրելու, ներգրավելու դպրոցական աշխատանքներում ԾԽ և ԱԽ ակտիվ ներգրավվածություն ունեն արտադասարանական և արտադպրոցական միջոցառումներում: Մեթոդական միավորումներում ընդգրկված են հաստատության բոլոր ուսուցիչները: Դպրոցում գործում է երեք մեթոդական միավորումներ՝

1. « Տարրական»
2. «Հումանիտար»
3. «ԲՏՃՄ»

Նիստերի ժամանակ քննարկվում են մեթոդմիավորման փաստաթղթերի վարման կարգը,մեթոդմիավորման ուսուցիչների հետ աշխատանքի հիմնական ուղղությունները, ժամանակակից մանկավարժական մոտեցումները և առանձին առարկաների դասավանդման, գիտելիքի ստուգման, գնահատման չափանիշների, հարցաշարերի կազմման սկզբունքներին առնչվող և բազմաթիվ այլ հարցեր:

Դպրոցի մեթոդմիավորումների գործունեության նպատակը կրթական գործընթացի ճիշտ ռազմավարության ընտրությունն է, ուսումնադաստիարակչական գործընթացի, դասավանդման ընթացիկ վիճակի համապատասխանությունը ՀՊՉ- ին, հիմք ընդունելով աշակերտների կարողությունների և հմտությունների զարգացումը, նախագծային և հետազոտական աշխատանքների կազմակերպումը , աշակերտների գիտելիքների որակի, նրանց զարգացման մակարդակի ուսումնասիրությունը, մեթոդական աշխատանքի արդյունավետության վերլուծությունը և այլն: Մեթոդմիավորումներն ապահովում են առարկայական չափորոշիչների պահանջների և պետական ծրագրերի կատարումը:

Միասնական նպատակների ուսուցման և դաստիարակության համար մանկավարժական, ծնողական և աշակերտական խորհուրդները տեղեկացված են և կշարունակեն տեղեկանալ՝

սոցիալական աջակցություններից օգտվող աշակերտների, նյութապես անապահով

աշակերտների, միակողմանի ծնողազուրկ աշակերտների, ծնողական խնամքից զրկված

աշակերտների, միայնակ մոր/հոր խնամքի տակ գտնվող աշակերտների,հաշմանդամություն ունեցող աշակերտներին աջակցություն ցուցաբրող թիմի հաշվետվություններին:

2.2 Հաստատության կառավարման մարմնի և տնօրենի համագործակցության վերլուծություն

Դպրոցում գործում է կանոնադրության համաձայն ձևավորված կառավարման մարմինը՝ խորհուրդը, և խորհրդակցական մարմիններ՝ մեթոդական միավորումները, մանկավարժական խորհուրդը, ծնողական խորհուրդը, աշակերտական խորհուրդը, որոնք կանոնավոր գումարում են նիստեր և կազմակերպում աշխատանքներ: Ծխ-ի և Ախ-ի ակտիվ ներգրավվածությունը ներդպրոցական և արտադպրոցական միջոցառումներին: Կրթության գործունեության արդյունավետ կազմակերպման, ինչպես նաև զարգացման ծրագրին աջակցելու և համայնքի հետ արդյունավետ համագործակցություն ապահովելու նպատակով դպրոցում գործում են խորհրդակցական մարմիններ:



Դպրոցի խորհրդի լիազորությունները պետք է ծավալվի հետևյալ ուղղություններով՝

- Նյութատեխնիկական բազայի հարստացման ուղղություն:
- Դպրոցի ծնողական խորհրդի գործունեության վերաբերյալ առաջարկությունների ներկայացում:
- Կրթության կառավարման մարմնին դպրոցի զարգացման վերաբերյալ առաջարկությունների ներկայացում:
- Դպրոցական շինարարության, մարզադահլիճի շինարարության վերաբերյալ պետական լիազորված մարմիններին առաջարկություններ ներկայացնելը:

Դպրոցի կոլեգալ կառավարման մարմինը՝դպրոցի խորհուրդը, բաղկացած է 9 անդամից,

որոնցից 2-ը դպրոցի մանկավարժական խորհրդի ներկայացուցիչ են, 2-ը ընտրվել են ծնողական խորհրդի կողմից, 3-ը Լոռու մարզպետի ներկայացուցիչն են և 1-ը ՀՀ Կրթության և գիտության նախարարության ներկայացուցիչն է:

Կառավարման խորհրդի անդամների մասին տվյալներ.

N	Անուն, ազգանուն	Ու՞մ կողմից է առաջադրված	Աշխ. վայրը
1	Ղևոնդյան Գոհար	ԿԳՄՍ	Լոռու մարզպետարան
2	Ավետիսյան Կարեն	Մարզպետարան	Լոռու մարզպետարան
3	Կոստանյան Էրիկ	Մարզպետարան	Լոռու մարզպետարան
4	Հովհաննիսյան Ասքանազ	Մարզպետարան	ԲԷՑ /ՓԲԸ/
5	Գրիգորյան Վահե	Համայնքապետարան	Վանաձորի համայնքապետարան
6	Մովսիսյան Արփինե	Մանկ. խորհուրդ	Վանաձորի թիվ 9 դպրոց
7	Առաքելյան լուսինե	Մանկ. խորհուրդ	Վանաձորի թիվ 9 դպրոց
8	Պետրոսյան Արմինե	Ծնող. խորհուրդ	Թուֆենկյան /ՍՊԸ/
9	Բորջյան Քրիստինե	Ծնող. խորհուրդ	-

Հաստատության տնօրենը կառավարման մարմնի նիստերին մասնակցում է խորհրդակցական ձայնի իրավունքով, խորհրդի նիստերն արձանագրվում են: Խորհուրդն իր աշխատանքներն իրականացնում է՝ համաձայն սահմանված կարգի, անդամները փոխգործակցում են, պահպանում են բարեվարքության կանոնները: Կայացրած որոշումները կատարվում են ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան: Խորհրդի աշխատանքները կազմակերպում է խորհրդի նախագահը՝ խորհրդի մնացած անդամների և հաստատության տնօրենի աջակցությամբ: Կառավարման խորհրդի գործունեությունը ուղղված է ուսումնական հաստատության կառավարման արդյունավետության բարձրացմանը, հնարավորկարիքների բացահայտմանն ու բավարարմանը:

2.2 Սահմանված նպատակի և խնդրի համապատասխան գործողությունները

Դպրոցական համայնքը պետք է անտարբեր չլինի դպրոցի և կրթության նկատմամբ: Այն պետք է դառնա ժողովրդական քաղաքացիական հասարակության համար կարևոր բարոյական արժեքներ սերմանող օղակ:



Կրթության կառավարման մարմինների և շահառու կազմակերպությունների հետ ամուր և արդյունավետ համագործակցության հաստատումը կարևոր է որակի կառավարման և օպտիմալ կրթական գործընթացի ապահովման համար: Այս կազմակերպությունները ծառայում են որպես անգնահատելի ռեսուրսներ՝ առաջարկելով օգնություն, առաջնորդություն և համագործակցություն դպրոցներին: Ուստի նրանց հետ բաց և թափանցիկ համագործակցային հարաբերություններ զարգացնելը հրամայական է, քանի որ դա ծառայում է դպրոցի լավագույն շահերին: Կարևոր է նշել, որ այս համատեքստում միակողմանի շահագրգռվածությունը բավարար չէ: Համագործակցությունը պետք է լինի ամուր և անկողմնակալ՝ ապահովելով, որ ցանկալի արդյունքը ոչ միայն մակերեսային է, այլ իսկապես արժեքավոր: Կրթության կառավարման բարձրացումը և ուսումնական գործընթացի արդյունավետությունը երկուսն էլ արդյունավետ համագործակցության արդյունք են: Դպրոցը ակտիվորեն համագործակցում է տարբեր կազմակերպությունների հետ, ինչպիսիք են ԿԳՄՍ-ի, Լոռու մարզպետարանի կրթության վարչությունը, , ԿՏԱԿ- ի, ԳԹԿ-ի, ՏՄԱԿ-ի, ԿԶՆԱԿ հիմնադրամը՝ գիտակցելով նրանց կարևոր դերը դպրոցի զարգացման գործում: Դպրոցը ձգտում է թափանցիկ և բաց համագործակցության՝ արժևորելով կարծիքները, առաջարկությունները և կառուցողական քննադատությունը՝ միաժամանակ դրդված լինելով գնահատանքի և խրախուսանքի միջոցով: Նման կառուցողական փոխգործակցության խթանումը բխում է դպրոցի լավագույն շահերից: Սակայն ակնհայտ է, որ մանկավարժական կազմի մեջ կա ոգևորության և անտարբերության պակաս, հատկապես շահառու կազմակերպությունների հետ համագործակցության հարցում: Սա ընդգծում է այս ոլորտում զգալի բարելավումների անհրաժեշտությունը: Դա է պատճառը ,որպեսզի ընդլայնեք համագործակցությունը կրթական ծրագրերի մասնակցությամբ , մասնավորապես մրցույթների մասնակցություն աշակերտների նախագծային և հետազոտական աշխատանքներով .

Բնապահպանական հիմնախնդիրներ- ,,Կլիմայական արկղիկ ,, ,,Գիտսերունդ,, և այլ կրթական ծրագրի հետ համագործկցությունը կարող խթան հանդիսանալ աշակերտների զարգացվածության մակարդակի բաձրացմանը և մասնագիտական կողմնորոշմանը;

Դպրոց- ծնող կապն իրականացվում է հիմնականում ծնողական խորհուրդների գործունեությամբ: Բոլոր էքսկուրսիաները, ներդնումները կատարվում են ծնողխորհուրդների միջոցով ու մասնակցությամբ: Կանոնադրական մյուս պահանջների կատարման համար ծնողխորհուրդները նախաձեռնություն չեն ցուցաբերում կամ ցուցաբերում են մասամբ: Երեխաների ուսումնադաստիարակչական աշխատանքների իրականացման գործում բավարար չէ ծնողների մասնակցությունը: Հոգալով իրենց երեխաների սոցիալական կարիքները՝ մեծ մասը հետևողականորեն չէ նրանց կրթության հարցում, որը դժվարացնում է մանկավարժի աշխատանքը, չեն հասնում ակնկալվող արդյունքի: Թույլ են ծնողների շրջանում տարվող մանկավարժական քարոզչությունը , ընտանիքի կողմից երեխայի նկատմամբ միասնական մեթոդամանկավարժական մոտեցումներն ու պահանջները: Փաստ է, որ ծնողներն հետևողական են իրենց երեխաների պաշտպանության հարցում ու ոչ հետևողական պարտականությունների կատարման մեջ: Ծնողական խորհուրդը գործում է ըստ կանոնադրության, նախաձեռնում

որոշ միջոցառումներ , սակայն ֆինանսական միջոցների սղության պատճառով չի կարողանում կազմակերպել շրջագայություններ , էքսկուրսիաներ:



Հաստատության խորհրդատվական մարմինների, որոնք հայտնի են, որպես առարկայական-մեթոդական միավորումներ, նպատակն է համակարգել և վերահսկել մեթոդական գործունեությունը: Այս միավորումները կամ ենթախմբերը բաղկացած են այն առարկաներից, որոնք սերտորեն փոխկապակցված են, որոնք աշխատում են միասին բարելավելու կրթական գործընթացը և բարելավելու կրթության որակը լավ պլանավորված և արդյունավետ դասավանդման մոտեցման միջոցով: Մեթոդական միավորումների ժողովներն անցկացվում են ամսական կտրվածքով, իսկ ընթացակարգերը փաստաթղթավորվում են սահմանված ուղեցույցներով: Մեթոդական միավորումները կատարում են հետևյալ գործառույթները.

- Ապահովել ուսումնական հաստատություններում դասավանդման օրինակելի փորձի փոխանակում

- Դասավանդման, կրթական խնդիրների, արտադպրոցական և համադասարանական գործունեության հետ կապված քննարկումներ անցկացնել
- Նպաստել ուսուցիչների մասնագիտական որակների զարգացմանը
- Կրթությանը վերաբերող նորմատիվային և մեթոդական փաստաթղթերի ուսումնասիրություն
- Մշակել ուսումնական և թեմատիկ պլաններ
- Անցկացնել փոխադարձ դասախոսություններ, արդյունքների քննարկում և վերջնական արդյունքների ամփոփում
- Վերլուծել ծրագրերն ու մեթոդները, վերահսկել առարկայի դասավանդման կարգավիճակը և առաջարկություններ անել:

Կազմակերպված միավորման աշխատանքը բազմակողմանի է. Դրա նպատակն է բարելավել ուսուցիչների մասնագիտական որակը և խթանել նրանց թիմային աշխատանքի ոգին: Մեթոդական միավորուներում բոլոր անդամներն ունեն հավասար իրավունքներ և պարտականություններ:

Վերջինիս աշխատանքը հաշվետու է մեթոդական միավորման նախագահին, ով պատասխանատու է մեթոդական միավորման աշխատանքների համակարգման և մեթոդական միավորման հանդիպումների ժամանակ այն ամփոփելուն :

Ուսուցչական թիմի գործունեության հիմքում ընկած է ուսուցչի որակի բարելավումը:Ուսուցչի որակի բարելավումն ուղղակիորեն պայմանավորում է կրթական նոր չափորոշիչներով նախատեսված վերջնական արդյունքների իրականացումը կրթական գործընթացում, որի հաջողության տեսլականը ուսուցիչների մանկավարժական հմտությունների զարգացումն է ժամանակին համահունչ :Ժամանակին համահունչ զարգացման համար անհրաժեշտ է մասնագիտական վերապատրաստումներ, կրթական նոր ծրագրերի ծանոթացում և ժամանակակից դասի հստակ պլանավորում և իրականացում:Կարելի է ասել, որ ուսուցիչները կարող են օրինակ բերել: Այն նպաստում է կրթական համակարգի կատարելագործմանը և կրթական գործընթացի հաջող իրականացմանը: Հաստատությունն ունի 3 առարկայական խումբ.

Տեղեկություններ ԲՏՀՄ առարկաների մեթոդական միավորման կազմի, կրթական աշխատանքային տվյալների մասին 2023-2024 ուստարի.

N	Անուն, ազգանուն	Կրթությունը	Ինչ առարկա է դասավանդում	Ուսումնական բեռնվածությունը
1	Թորոսյան Ռուզաննա	Բարձրագույն	Մաթեմատիկա, հանր., երկրաչ., ինֆորմատիկա, ԹԳՀԳ	22 ժ.
2	Մնացականյան Կարինե	Բարձրագույն	Մաթեմատիկա, հանր., երկրաչ.,	11 ժ.
3	Մովսիսյան Արփինե	Բարձրագույն	Կենսաբանություն, բնություն	12 ժ.
4	Ուլիխանյան Լիլի	Բարձրագույն	Աշխարհագրություն	8 ժ.
5	Դուրմիշյան Նունե	Բարձրագույն	Քիմիա	6 ժ.
6	Մուրադյան Գոհար	Բարձրագույն	Ֆիզիկա	6 ժ.
7	Աքուլյան Անահիտ	Բարձրագույն	Տեխնոլոգիա	8 ժ.
8	Նասիբյան Ժենյա	Բարձրագույն	Շախմատ	5 ժ.
9	Սարգսյան Շողիկ	Բարձրագույն	Տեխնոլոգիա	2 ժ.

Տեղեկություններ տարրական առարկաների մեթոդական միավորման կազմի, կրթական աշխատանքային տվյալների մասին 2023-2024 ուստարի.

N	Անուն, ազգանուն	Կրթությունը	Ինչ առարկա է դասավանդում	Ուսումնական բեռնվածությունը
1	Դավթյան Գայանե	Բարձրագույն	Մաթեմատիկա, երաժշտություն	12 ժ.
2	Խարաջյան Ռուզաննա	Բարձրագույն	Դասվար	13ժ.
3	Պապինյան Սուսան	Բարձրագույն	Դասվար	17ժ.
4	Հոռոմյան Լուսինե	Բարձրագույն	Դասվար	17ժ.
5	Սարգսյան Շողիկ	Բարձրագույն	Դասվար	14ժ.
6	Խուդաղյան Լուսինե	Բարձրագույն	Ֆիզկուլտուրա	22ժ.
7	Բարոյան Գևորգ	Բարձրագույն	ՆԶՊ	2ժ.

Տեղեկություններ հումանիտար առարկաների մեթոդական միավորման կազմի, կրթական աշխատանքային տվյալների մասին 2023-2024 ուստարի

N	Անուն, ազգանուն	Կրթությունը	Ինչ առարկա է դասավանդում	Ուսումնական բեռնվածությունը
1	Վարդանյան Անահիտ	Բարձրագույն	Հայոց եկեղեցու պատմություն	3 ժ.
2	Ծատուրյան Նարինե	Բարձրագույն	Մայրենի, հայոց լեզու, գրականություն	16ժ.
3	Օհանյան Գայանե	Բարձրագույն	Հայոց լեզու, գրականություն	12ժ.
4	Ավետիքյան Լոլիտա	Բարձրագույն	Ռուսաց լեզու	8 ժ.
5	Առաքելյան Լուսինե	Բարձրագույն	Ռուսաց լեզու, գրականություն	12ժ.
6	Հովհաննիսյան Աննա	Բարձրագույն	Ռուսաց լեզու, գրականություն	3 ժ.
7	Մելիքյան Հեղինե	Բարձրագույն	Անգլերեն	16ժ.
8	Պետրոսյան Անի		Պատմություն, հասարակագիտություն, իմ հայրենիք	19ժ.

2.3 Մանկավարժական համակազմի մասնագիտական որակների ներկայացումը

Ուսուցիչը մի հրաշագործ է, որ ընդունակ է երեխաներին տեղափոխել մի դարաշրջանից մյուսը:

ՀՀ Լոռու մարզի «Վանաձորի Խ. Աբովյանի անվան թիվ 9 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի մանկավարժական խորհուրդն իր աշխատանքներն իրականացնում է բարձր պատասխանատվությամբ՝ նիստերի օրակարգերում առաջադրելով դպրոցի համար առաջնային և հրատապ հիմնահարցերի քննարկումները: Դպրոցի մանկավարժական խորհրդի կազմում ընդգրկված են 30 ուսուցիչներ և մանկավարժական աշխատողներ: Ուսումնական տարվա ընթացքում խորհուրդը սահմանված կարգով անց է կացնում 7-8 նիստ, որտեղ լսվում են խորհրդի կանոնադրությամբ նախատեսված հարցեր, կայացնում որոշումներ:Մանկավարժական խորհրդի նիստերի մասին սահմանված ժամկետներում մասնակիցները ծանուցվում են, նիստերը բաց են խորհրդակցական ձայնի իրավունք ունեցողների համար: Մանկավարժական խորհրդի առաջին նիստում հաստատվում է խորհրդի նիստերի օրակարգը, ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանը, դպրոցական բաղադրիչի ժամերի բաշխումը: Այսօրվա մարտահրավերներին ընդառաջ՝ առանձնահատուկ ուշադրություն պետք է դարձնել հասարակության կողմից որակյալ կրթության նկատմամբ պահանջարկի ձևավորմանը: ՈՒշադրության կենտրոնում է նախագծային աշխատանքների, խմբակների , երկարօրյա ուսուցման պլանավորումը և կատարումը :Դպրոցի մանկավարժական համակազմի որակի բարելավումը ենթադրում է կրթական մակարդակի բարձրացում, դաստիարակչական համակարգի աշխատանքների կատարելագործում:

- քննարկվում են հանրակրթության պետական չափորոշչի պահանջների համաձայն հանրակրթական հիմնական ծրագրերի իրականացման հարցերը,
- քննարկվում են ԿԱՊԿ ունեցող սովորողների համար խելամիտ ուսուցման պայմաններ ապահովելու, անհատական ուսուցման պլանին և սովորողին տրամադրվող մանկավարժահոգեբանական աջակցության ծառայություններին վերաբերող հարցեր
- քննարկվում են ուսուցման բովանդակության, մեթոդապես հագեցած դասագործընթաց ունենալու, խմբակների, երկարօրյա խմբերի ստեղծման հարցերը,
- որոշումներ են ընդունվում հաստատության ուսումնական պլանի դպրոցական բաղադրիչի ժամաքանակի բաշխման, սովորողների փոխադրման, խրախուսման և այլն:

Անհրաժեշտ է՝

- մշակել ղեկավարման և կազմակերպման մեխանիզմ , որը պետք է ուղղված լինի մանկավարժների մասնագիտական որակաորման մակարդակի հետագա բարձրացմանը,
- ստեղծել նորմատիվ իրավական և կազմակերպական այնպիսի մոդելներ , որոնք կապահովեն դպրոցի մանկավարժական համակազմի որակական բարելավումը,

- աջակցել մանկավարժներին մշակելու, տպագրելու իրենց ուսումնամեթոդական աշխատանքները,
- մոտիվացնել մանկավարժներին՝ կատարելու հետազոտական աշխատանքներ, ստեղծել պայմաններ փորձարարական աշխատանքների համար,
- աջակցել և ուղղորդել ուսուցիչներին նախապատրաստվելու և մասնակցելու ուսուցիչների կամավոր ատեստավորմանը:

Մանկավարժական համակազմի վերաբերյալ տեղեկատվություն.

Մանկավարժական աշխատողների թիվը	29
Կամավոր ատեստավորում անցած ուսուցիչների թիվը	1 / Մնացականյան Կարինե-մաթեմատիկայի ուսուցիչ, ստանում է հավելավճար/
Պարտադիր ատեստավորում անցած ուսուցիչների թիվը	8 /2022-2023 ուստարի/
Տարակարգ ունեցող ուսուցիչների թիվը	1 /2023-2024 ուստարվա 1-ին կիսամյակ/



Տվյալներ ուսուցչական անձնակազմի և նրանց գործունեության վերաբերյալ՝ նախորդ 3 ուստարիների համար.

Ցուցանիշ	2020-2021 ուստարի	2021-2022 ուստարի	2022-2023 ուստարի

Բարձրագույն մանկավարժական որակավորում ունեցող ուսուցիչների թիվը և տոկոսը (տոկոսի հաշվարկ. բարձրագույն մանկավարժական որակավորում ունեցող հաստատության ուսուցիչների թվի հարաբերությունը ուսուցիչների ընդհանուր թվին՝ տոկոսային արտահայտությամբ)	23ուս. 100%	23ուս. 100%	23ուս. 100%
Ըստ մասնագիտության դասավանդող ուսուցիչների թիվը և տոկոսը (տոկոսի հաշվարկ. ըստ մասնագիտության դասավանդող հաստատության ուսուցիչների թվի հարաբերությունը ուսուցիչների ընդհանուր թվին՝ տոկոսային արտահայտությամբ)	23ուս. 100%	23ուս. 100%	23ուս. 100%
Տարակարգ ունեցող ուսուցիչների թիվը և տոկոսը (տոկոսի հաշվարկ. տարակարգ ունեցող հաստատության ուսուցիչների թվի հարաբերությունը ուսուցիչների ընդհանուր թվին՝ տոկոսային արտահայտությամբ)	8 35%	8 35%	7 30%
Նախարարության կողմից երաշխավորված կամ այլ կազմակերպություններում վերջին 3 տարում վերապատրաստում անցած ուսուցիչների թիվը և տոկոսը (տոկոսի հաշվարկ. վերջին 3 տարում վերապատրաստում անցած հաստատության ուսուցիչների թվի հարաբերությունը ուսուցիչների ընդհանուր թվին՝ տոկոսային արտահայտությամբ)	11 48%	1 48%	14 60%
Որպես ուսուցիչ վերապատրաստող(դասախոս) վերապատրաստված և վերապատրաստման դասընթացներ վարող ուսուցիչների թիվը և տոկոսը (տոկոսի հաշվարկ. վերապատրաստման դասընթաց վարող հաստատության ուսուցիչների թվի հարաբերությունը ուսուցիչների ընդհանուր թվին՝ տոկոսային արտահայտությամբ)	1 4%	1 4%	1 4%
Ուսուցիչների միջին տարիքը (հաշարկ. հաստատության բոլոր ուսուցիչների տարիքների գումարի հարաբերությունը ուսուցիչների ընդհանուր թվին)	50	51	52

Միջազգային ու հանրապետական պարբերականներում ամսագրերում) հոդվածներ, մասնագիտական հրապարակումներ, ինչպես նաև դասագրքեր, մեթոդական ձեռնարկներ, գիտամանկավարժական, հեղինակային և այլ աշխատություններ ունեցող ուսուցիչների թիվը և տոկոսը. (տոկոսի հաշվարկ. հոդվածներ և վերը նշված մասնագիտական հրապարակումներն ունեցող հաստատության ուսուցիչների թվի հարաբերությունը ուսուցիչների ընդհանուր թվին՝ տոկոսային արտահայտությամբ)	8 35%	8 35%	7 30%
Դասավանդման աշակերտակենտրոն, մասնակցային, ինտերակտիվ մեթոդներին տիրապետող և դրանքկիրառող ուսուցիչների թիվը և տոկոսը (տոկոսի հաշվարկ. դասավանդման աշակերտակենտրոն, ինտերակտիվ մեթոդներին տիրապետող և կիրառող հաստատության ուսուցիչների թվի հարաբերությունը ուսուցիչների ընդհանուր թվին՝ տոկոսային արտահայտությամբ)	23ուս. 100%	23ուս. 100%	23ուս. 100%
Ուսումնական գործընթացում տեղեկատվական հաղորդակցման տեխնոլոգիաներ, այդ թվում՝ ինտերնետ, կիրառող ուսուցիչների թիվը և տոկոսը (տոկոսի հաշվարկ. ուսումնական գործընթացում տեղեկատվական հաղորդակցման տեխնոլոգիաներ, այդ թվում ինտերնետ կիրառող ուսուցիչների թվի հարաբերությունը ուսուցիչների ընդհանուր թվին տոկոսային արտահայտությամբ)	23ուս. 100%	23ուս. 100%	23ուս. 100%
Սովորողներին համակարգիչների կիրառմամբ տնային աշխատանքներ հանձնարարող ուսուցիչների թիվը	23 100%	23 100%	23 100%
Ուսուցիչների բացակայությունների ընդհանուր թիվը (հաշվարկ. Ուստարվա ընթացքում հաստատության բոլոր ուսուցիչների բացակայած օրերի ընդհանուր թիվը)	145օր	98օր	98օր
Ուստարվա ընթացքում հաստատությունում անցկացվող ցուցադրական բաց դասերի թիվը	10	19	24
Ուսումնական տարվա ընթացքում ուսուցիչների փոխադարձ դասալսումների թիվը	113	165+108	265
Ուսումնական տարվա ընթացքում	3	10	34

հաստատությունից դուրս անցկացվող գործնական պարապմունքների թիվը,			



Բոլոր առարկաները դասավանդվում են մասնագիտական կրթություն ունեցող ուսուցիչների կողմից: Դպրոցի գրեթե բոլոր մանկավարժները մասնակցել են պարտադիր ատեստավորման վերապատրաստման դասընթացներին և շարունակում են մասնակցել ԿԶՆԱԿ- ի կողմից իրականացվող վերապատրաստումներին առկա և առցանց ձևաչափով: Ուսումնասիրում են նոր չափորոշչի պահանջները վերապատրաստումների միջոցով:





Աշակերտական համակազմը .

Դպրոցի աշակերտական խորհուրդը ծառայում է, որպես խորհրդատվական մարմին և լայն հնարավորություններ է տալիս աշակերտներին ինքնակառավարման համար: Խորհուրդն իր գործունեությունն իրականացնում է ժողովրդավարության և ինքնավարության սկզբունքներին համապատասխան: Աշակերտական խորհուրդի աշխատանքները վերահսկում է դպրոցի դաստիարակչական աշխտանքի գծով պատասխանատու տեղակալը, քանի որ դպրոցը չունի մասնագիտական կրթական աջակցության համար պատասխանատու տեղակալ: Հանձնաժողովի համակողմանի աշխատանքը օգնում է բարելավել դպրոցների կառավարման արդյունավետությունը, կրթական գործընթացները և դպրոցներում խտրականության ու բռնության բացահայտումն ու կանխարգելումը:

Սակայն պետք է նշել, որ աշակերտական խորհուրդը իր գործառույթներն ամբողջությամբ չեն իրականացում , աշակերտների ինքնավարության լիարժեք պաշտպանության տեսանկյունից սա լուրջ խնդիր է: Հնարավորության դեպքում աշակերտական խորհրդի ջանքերով կազմակերպվել է բարեգործական միջոցառումներ: Աշակերտական խորհուրդը իրենց աշխատանքներին ներգրավված են նաև կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող աշակերտները: Դպրոցում երեխաների ներառմանը նպաստելու թիմային աշխատանքն իրականացվում է ուսուցիչների, հոգեբանների և ուսուցչի օգնականների կողմից: Աշակերտական միությունը նույնպես աջակցում է այս գործընթացին՝ կազմակերպելով քննարկումներ, աշխատաժողովներ, դիտելով ուսումնական տեսանյութեր:

Վերոնշյալ միջոցառումների շնորհիվ դպրոցական կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների նկատմամբ աշակերտների վերաբերմունքը դրական է, ընկերական և կարեկից:

Դպրոց հաճախող աշակերտների թվի վերաբերյալ տեղեկատվություն 2023 առաջին կիսամյակի դրությամբ



ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ

Աշակերտական խորհրդի կողմից նախաձեռնվում են տարատեսակ միջոցառումներ՝ներառյալ շաբաթօրյակները,հաստատության և դպրոցամերձ տարածքի մաքրման աշխատանքները, մշակութային, սպորտային սոցիալական բնույթի նախաձեռնություններ:

Աշակերտական խորհրդի կողմից անց են կացվում հանդիպում-քննարկումներ՝ վերաբերող հիշարժան օրերին, տոներին:

Անցկացվում են ինքնավարության օրեր՝ «Դասը վարում է աշակերտը», «Ես գրադարանավար եմ», «Անվտանգ կենսագործունեություն», «Մաքուր դպրոց», «Համայնքի նշանավորները», «Ամենամաքուր դասարանը»

Աշակերտական խորհուդը մշտադիտարկում է սովորողների վարքը, համապատասխան հաշվետվությունները ներկայացնում դպրոցի տնօրենությանը:

ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ

Խարհուրդն ունի ռեսուրսների կարիք:

Սովորողների շրջանում քիչ թիվ են կազմում նորարարներն ու նախաձեռնողները:

Նախաձեռնությունների, ծրագրերի իրականացման ժամանակ քիչ է ակտիվ մասնակիցների թիվը, ինչը խաթարում է խորհրդի լիարժեք աշխատանքը:

2.4 Մանկավարժական համակազմի մասնագիտական որակների զարգացումն ապահովող միջոցառումները:

1. Ժամանակակից դպրոցները նորարար, ընդունակ, համագործակցող և նախաձեռնող մանկավարժների կարիք ունեն, կրթական ներկայիս բարեփոխումը նաև նոր պահանջներ է առաջադրում մանկավարժներին՝ նրանցից պահանջելով զարգացնել մասնագիտական հմտություններ և տիրապետել նոր տեխնոլոգիաներին: Հերթական վերապատրաստումը, կամավոր հավատարմագրման գործընթացը, այս բոլոր նպատակների իրագործմանն ուղղված տարբեր կրթական ծրագրեր և նախաձեռնություններ են ուղղված այս նպատակին, ինչը կարող է դրական ազդեցություն ունենալ կրթության նկատմամբ նոր հայացքների ձևավորման վրա:
2. Առանց նորագույն տեխնոլոգիաների և դասավանդման նորագույն մեթոդների յուրացման անհնար է ապահովել բարձրորակ կրթություն, անհնար է հասնել արդյունքների, անհնար է զարգացնել աշակերտների կարողությունները և անհնար է համակողմանի գիտելիքներ հաղորդել:
3. Ուստի կարծում եմ, որ ուսուցիչների համար շատ կարևոր է ակտիվորեն մասնակցել տարբեր դասընթացներին և հավաստագրումներին, ինչպես նաև ինքնակրթությանը և փորձի փոխանակմանը: Դպրոցի ամենակարևոր ռեսուրսը մարդկային ռեսուրսն է: Ժամանակակից ուսուցիչները աշակերտների առաջնորդներն են, որն ուղղորդում է, ոգեշնչում և պետք է միավորի աշակերտներին և սերմանի իսկական կրթության կարևորությունը, որն իրականում անհնար է առանց ժամանակակից մեթոդների, գիտական և տեխնոլոգիական գիտելիքների և հմտությունների: Շատ դեպքերում կրթական համայնքի դիմադրությունը գալիս է այն ժամանակ, երբ բարեփոխումների մասին հստակ տեղեկացված չեն և դժվար են իրականացնում գործընթացը
4. Այնուամենայնիվ, պետք է նշել, որ կարծրատիպերը կոտրող մանկավարժները հասել են լավագույն արդյունքների և պետք է լինեն լավագույն, նորարար և ստեղծագործ մանկավարժները, որոնցից կարող են սովորել և ոգեշնչել:
5. Տնօրենի մոտեցման կարևորությունը չի կարելի գերագնահատել, երբ խոսքը վերաբերում է տարբեր մարտահրավերներին դիմակայելուն, որոնք պահանջում են մեծ ջանքեր և ռեսուրսներ: Կարևոր է ուսուցիչների շրջանում զարգացնել նորարարության մշակույթը և ուղղորդել նրանց, ովքեր կարող են ավելի դիմացկուն լինել փոփոխություններին: Ակնհայտ է, որ առանց կրթական նորարարական մեթոդների կիրառման՝ մեր դպրոցն անկասկած կբախվի անխուսափելի ձախողման: Քանզի ժամանակակից աշակերտին բարձրակարգ կրթություն տրամադրելու համար անհրաժեշտ է , հստակ պլանավորված լինի կրթական գործընթացը , համապատասխանի սահմանված նպատակին և վերջնարդյունքին:
6. Կրթական գործընթացում ներգրավված անձնակազմի պարտականությունն է ապահովել ուսումնական գործընթացի հաջող իրականացումը դպրոցներում՝

հավատարիմ մնալով Գիտությունների ազգային ակադեմիայի կողմից սահմանված ուղեցույցներին: Հետևաբար, շատ կարևոր է, որ նրանք ունենան ստանդարտ պահանջների համապարփակ պատկերացում և ունենան անհրաժեշտ հմտություններ՝ արդյունավետորեն պլանավորելու, դասավանդելու և գնահատելու կրթական առարկան այս սահմանված չափանիշներին համապատասխան: Նոր չափորոշչի ներդրումը հնարավորություն է տալիս գիտելիքի վրա կենտրոնացած մոտեցումից անցնելու ունակությունների զարգացման վրա շեշտադրմանը, որը ծառայում է որպես ժամանակակից կրթության շարժիչ ուժ և կենսական դեր է խաղում բարձրորակ և ներառական կրթական համակարգի կառուցման գործում:

7. Մեզ համար չափազանց կարևոր է զարգացած կրթական գործընթացի ամբողջական իրականացումը: Դրան հասնելու համար շատ կարևոր է դպրոցում ստեղծել այնպիսի կրթական միջավայր, որը խթանում է աշակերտների անկախ գործունեությանը և կնպաստի հիմնական կարողությունների զարգացմանը: Ուսուցման գործընթացը պետք է ներառի ոչ միայն գիտելիքներ, կարողություններ և հմտություններ, այլև ամուր արժեքային համակարգի ձևավորում: Բոլոր աշակերտների անհատական կարիքներն ու առանձնահատկությունները բավարարելու համար անհրաժեշտ է կիրառել մանկավարժական մեխանիզմներ, որոնք հարմարեցված են յուրաքանչյուր աշակերտի համար: Սա ներառում է ուսուցման կազմակերպման ընթացքում նրանց անձնական կյանքի փորձի, հատուկ կարիքների և յուրահատուկ տաղանդների դիտարկումը:

8. Դասերի արդյունավետ անցկացումն ապահովելու համար կարևոր է դասերը պլանավորել և իրականացնել , ՀՊՁ-ներին համապատասխան:

9. Կրթության ոլորտում աճն ու նորարարությունը խթանելու համար ուսուցիչների համար կարևոր է ունենալ համագործակցության լայն հնարավորություններ իրենց ուսումնական հաստատություններում և մանկավարժությանը նվիրված առցանց հարթակներում: Ընդգրկվելով օրինակելի մանկավարժական փորձառություններով և ակտիվորեն ստեղծելով նորերը՝ ուսուցիչները կարող են շարունակաբար կատարելագործել իրենց հմտություններն ու գիտելիքները: Հրամայական է, որ վերապատրաստումները և հավաստագրերը չդիտվեն որպես ծանրաբեռնված առաջադրանքներ, այլ ավելի շուտ որպես արժեքավոր գործիքներ՝ ինքնամտածելու, սովորելու և անձնական զարգացման համար: Բացի այդ, ընդհանուր դպրոցական մշակույթը, ներառյալ մրցակցային միջավայրը, էական դեր է խաղում կրթության վերաբերյալ մանկավարժների տեսակետների ձևավորման գործում: Մանկավարժական անձնակազմի աճին աջակցելու համար կարևոր է, որ դպրոցների ղեկավարները ակտիվորեն բավարարեն իրենց մասնագիտական զարգացման կարիքները՝ ապահովելով համապատասխան գրականության հասանելիություն, նպաստելով բովանդակալից քննարկումներին և կազմակերպելով սեմինար- քննարկումներ,վերապատրաստումներ որոնք առաջնահերթություն են տալիս գործնական ուսուցմանը և հմտությունների ձեռքբերմանը:

ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ	ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ
Հաստատության մանկավարժական աշխատողների մի մասը առցանց համագործակցում է մանկավարժական համայնքի հետ «ԿՁՆԱԿ» «ԿՏԱԿ» շահառու կազմակերպությունների, «Հայկական կրթական միջավայր» կայքի, «Պաշարների շտեմարան» հարթակի շրջանակներում:	Հաստատությունում կան պասիվ ուանտարբեր մանկավարժական աշխատողներ: Հաստատությունն ունի նորարար ուսուցիչների պակաս: Ուսուցիչների շրջանում կան այնպիսի մանկավարժներ, ովքեր դժվարությամբ են հարմարվում անընդհատ փոփոխությունների
Ուսուցիչները սահմանված կարգով վարում են emis.am-ը:	Կամավոր ատեստավորմանը մասնակցած և տարակարգ ունեցող ուսուցիչների թիվը անհանգստացնող նվազ է:
Մանկավարժական աշխատողների որոշ մասը տիրապետում և վարում է տեխնոլոգիաների կիրառությամբ դասեր՝ սովորողների համար ապահովելով տեղեկատվությունն ինքնուրույն որոնելու, մշակելու և ներկայացնելու հնարավորություն:	Որոշ ուսուցիչների դժվարությամբ են հարմարվում կրթական նորարարություններին, լավ չեն տիրապետում տեխնոլոգիաներին
Բոլոր ուսուցիչները մասնակցում են պարտադիր ատեստավորումներին:	Մի շարք ուսուցիչներ ընդառաջ չեն գնում համագործակցությանը, նախաձեռնող չեն:

Դպրոցում դասավանդում են աշակերտակենտրոն, մասնակցային, ինտերակտիվ մեթոդներին տիրապետող և դրանք կիրառող ուսուցիչներ: Մանկավարժները հիմնականում պատրաստակամ են կատարելագործել գիտելիքները, ուսուցման մեթոդները՝ ժամանակի պահանջներին բավարարող կրթության ապահովման նպատակով: Համաճարակի պայմաններում ուսուցիչները իրականացրեցին հեռավար ուսուցում, որը նպաստեց, որ ուսուցիչները տիրապետեն հեռավար գործիքներին, մեծամասնությունը հմտորեն կիրառում է MS Teams հեռավար հարթակն իր բոլոր հնարավորություններով, հմտորեն օգտվում է առկա էլեկտրոնային կրթական ռեսուրսներից: Դպրոցի բոլոր ուսուցիչները ունեն բարձրագույն մանկավարժական որակավորում

Տնօրենության կողմից ուղղորդվելու , խրախուսվելու և աջակցություն է ցուցաբերելու կամավոր ատեստավորման գործընթացին մասնակցությունը :

2.5 Օգտագործվող ՏՀՏ և կրթական այլ տեխնոլոգիաների և նորարությունների ներկայացում

Աշակերտների գիտելիքների գնահատման, անհատական առաջադրանքների հանձնարարման և ուսումնական ծրագրերի կազմման ընթացքում պետք է լայնորեն օգտագործեն ժամանակակից տեխնոլոգիաներ։ Մանկավարժական գիտության, կրթական նոր տեխնոլոգիաների զարգացումն էլ ավելի է խթանում դասավանդման նոր մեթոդների, ուսուցման նոր ձևերի մշակումը։ Դպրոցը պետք է ապահովված լինի այն բոլոր տեխնիկական միջոցներով, որոնք անհրաժեշտ են 21–րդ դարի քաղաքացիների ձևավորման համար։ Ուսուցիչները պետք է ամեն անգամ նորովի կարողանան դասապրոցեսին կիրառել նոր տեխնոլոգիաները։ Դպրոցում առկա է ինտերնետ կապ, որը մանկավարժներին, աշակերտներին, վարչական աշխատողներին հնարավորություն է տալիս դասի ընթացքում պատրաստել քարտեր, ռուբրիկներ, հանել դասին առնչվող լրացուցիչ նյութեր, կազմել ծրագրեր, պլանավորել դասը, կազմակերպել տարբեր առարկաների դասի բովանդակությանն առնչվող մոտիվացնող նյութեր՝ գունավորելու հնարավորությունը թողնելով սովորողների ճաշակին։ Վարչական աշխատողները պաշտոնական գրությունները՝ ամբողջ թղթավարությունը, տարիֆիկացիաները, տարեկան պլանները, հաշվետվությունները, տնօրենական գրավորների հաշվետվությունները, գնահատման ձևաչափերը կազմում են համակարգչով՝ նորացված ծրագրերով։ Ուսուցիչներից շատերը տիրապետում են նոր գործիքակազմին, դասերի որակը և մեթոդները դարձնում ավելի մոտիվացնող։

Դպրոցում դասերի ժամանակ օգտագործվում են ՏՀՏ գործիքներ, ծրագրեր։ Հաճախ են կազմակերպում բաց դասեր՝ օգտագործելով Microsoft Power Point ծրագրի հնարավորությունները և դրանք ցուցադրում։

ՏՀՏ գործիքների իմացության կատերալագործման ուղղությամբ։ Ուսուցիչներն իրազեկված են «Հայկական կրթական միջավայր», «Պաշարների շտեմարան», ԿԶՆԱԿ-ի կայքերի մասին։

Հաճախակի օգտվում են ԿԶՆԱԿ-ում տեղադրված պաշարներից։

Ուսումնադաստիարակչական աշխատանքները կազմակերպելու նպատակով իրականացվում են դասղեկական ժամեր, որի ընթացքում ցուցադրվում են տարբեր ուսուցողական ֆիլմեր, հոլովակներ, աշակերտների պատրաստած ցուցադրություններ։



Իրականացվող քայլեր ՝

- Համագործակցել համայնքի ղեկավարի, ծնողների, բարեգործների հետ, աշակերտների հետ մասնակցել տարբեր կրթական ծրագրերի, մրցույթների
- Ապահովել նոթբուքերով նաև առարկայական դասասենյակները, ՏՀՏ կիրառման միջոցով բարձրացնել դասաժամի օգտագործման նպատակայնությունն ու ուսուցման արդյունավետությունը: ԹԳՀԳ և ինֆորմատիկա առարկաների վերջնարդյունքը ապահովելու համար անհրաժեշտ է նորագույն համակարգիչներով համալրումը:

2.6 Չափորոշչային պահանջներին համապատասխան կրթության որակի վերլուծություն

ՀՀ Լոռու մարզի «Վանաձորի Խ. Աբովյանի անվան թիվ 9 հիմնական դպրոց» ՊՈԱԿ -ն իր գործունեությունն իրականացնում է՝ կարևորելով 21-րդ դարի տեխնոլոգիական պահանջներով զինված, ինքնուրույն մտածող ու գործող, ժամանակի մարտահրավերներն ընկալող և հաղթահարող ստեղծագործ ու մարդասեր քաղաքացիների ձևավորումը, ուստի և ժամանակակից դպրոցի առաքելությունը կրթական կարիքների անցնցում և արդյունավետ բավարարումն ու զարգացումն է՝ նպատակ ունենալով ապահովել ուսումնական գործընթացի քանակական և որակական բարձր ցուցանիշներ:

Հանրակրթության պետական չափորոշիչը ձևավորվում է հանրակրթական հիմնական ծրագրերի հետևյալ բաղադրիչներից.

- ուսումնական բնագավառներ, դրանց բովանդակությանը ներկայացվող պահանջներ.
- շրջանավարտին ներկայացվող որակական պահանջներ՝ ըստ կրթական աստիճանների կարողունակություններ և ըստ կրթական աստիճանի ուսումնառության՝ ակնկալվող վերջնարդյունքներ.
- հենքային ուսումնական պլան և առարկայացանկերի ձևավորման հիմնական սկզբունքներ.
- սովորողների գնահատման ձևեր, սանդղակ, հաշվառման կարգ:

Չափորոշիչը նպատակաուղղված է հավասարապես հասանելի, ներառական և որակյալ կրթության քաղաքականության ապահովմանը:

Աշխատանքն արդարացված է, եթե կա կրթության որակ: Կրթության որակի բարձրացման համար անհրաժեշտ է վերլուծել.

- Ուսումնական գործընթացի փաստացի վիճակը
- Կրթական գործընթացի կատարողականությունը
- Կրթական գործընթացի արդյունավետությունը
- Կրթական գործընթացի որակը կրթական տարբեր աստիճաններում

Դասերի, ուսումնական միջոցառումների որակը.

Վերոնշյալ կետերի նկատմամբ կիրականացվի վերահսկողություն, հետևողականություն, աջակցություն, կմշակվի գործողությունների պլան՝ առկա սխալները, թերությունները վերացնելու համար: Մասնագետ ուսուցիչների դասաժամերն կօգտագործվեն փորձի փոխանակման, նոր մեթոդների կիրառման, դիդակտիկ պաստառների ցուցադրման, գնահատման տարբեր ձևերի մշակման, դպրոցում առկա բոլոր հնարավորությունների, նոր և դասի բովանդակությանն համապատասխան մեթոդների կիրառմամբ : Յուրաքանչյուր ուստարվա սկզբում ըստ հաստատված ժամանակացույցի ու պլանի կիրականացվեն առարկայի դրվածքի ուսումնասիրություն: Մերօրյա դպրոցում հանդիպում ենք հետևյալ խնդիրներին՝

- ԲՏՀՄ առարկաների մասնագետների պակասը
- Կամավոր ատեստավորմանը մասնակցել չցանկացողներ

Կարծում եմ՝ այս խնդիրը համակարգային է, և ամենամեծ մոտիվացիան կամավոր ատեստավորման աշխատավաձի բարձրացումն է: Սահմանված նպատակին և խնդրին համապատասխան գործողություններ.

- Եղած և եկող մասնագետների հետ տանել սովորեցնելու , աշխատանքը սիրելու , ինքնակրթվելու ռազմավարություն,
- Խրախուսել և մոտիվացնել ուսուցիչներին,
- Լինել կամեցող ընկեր և խորհրդատու:
- Ստեղծել ուսումնական, սոցիալ-հոգեբանական, ստեղծագործական միջավայր, որը կապահովի բոլոր սովորողների առաջնային կարողունակությունների, քննադատական, վերլուծական, ստեղծագործական մտածողության, անհատական ունակությունների, անձնային որակների զարգացումը:

- Ուսումնական հաստատությունում տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումը դարձնել կրթության պարտադիր բաղադրիչ՝ սովորողներին հնարավորություն տալով սեփական նախաձեռնություններն ու ծրագրերը իրականացնել, այդ թվում նաև տեխնոլոգիաների կիրառությամբ: Մասնակացություն տարբեր կրթական ծրագրերի:
- Անվերապահորեն ապահովել կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների կրթություն ստանալու հավասար իրավունքը՝ կիրառելով խելամիտ հարմարեցումներ ու մանկավարժական գործիքներ՝ վերջիններիս սոցիալականացումն անցնցում ապահովելու համար:
- Կարևորելով յուրաքանչյուր սովորողի անհատական կարողություններն ու ունակությունները՝ ստեղծել միջավայր, որը հաճելի և սիրելի է սովորողի համար:
- Սովորողների մոտ ձևավորել բարձր իրավագիտակցություն, քաղաքացիական և սոցիալական պատասխանատվություն:
- Կրթության մեջ կարևորել ոչ միայն գիտելիքը, այլև կարողունակությունների և գործնական հմտությունների ձեռքբերումը:
- Ուսուցման գործընթացում կարևորել ժողովրդավարական սկզբունքների և սովորողակենտրոն մոտեցումների ապահովումը:
- Ապահովել պետական և առարկայական չափորոշիչներին համապատասխան կրթական միջավայր:
- Հնարավորություններ ստեղծել սովորողների համար կրթական այլընտրանքային միջոցներով ուսուցման գործընթաց կազմակերպելու համար:
- Խթանել մանկավարժական աշխատողների մասնագիտական և մեթոդական որակների բարձրացումը՝ ուղղորդելով վերջիններիս մասնագիտական վերապատրաստումների, ինքնակրթության, փորձի փոխանակման, նորարարության:
- Իրականացնել նախագծային և հետազոտական աշխատանքներ, ինտեգրված, ոչ ֆորմալ դասեր՝ սովորողների համար ապահովելով բազմատարր ուսումնառության հնարավորություն:

- Խրախուսել նորարարությունը դպրոցում, կարևորել տեխնոլոգիաների կիրառումը:
- Կարևորել բարեվարք, աջակցող, հավասար պայմանների առկայությունը հաստատությունում:
- Կազմակերպել երկարօրյա և արտադասարանային ուսուցում:

2022-2023 ուստարվա տվյալներ սովորողների ուսումնառության արդյունքների վերաբերյալ.

Հիմնական առարկաներ	Սովորողների թիվը		Հիմնական առարկաներից տարեկան գնահատականների միջինը		4-րդ դասարանում գիտելիքների ստուգման և 9-րդ, դասարանում պետական ավարտական քննությունների միավորների միջինը	
	4-րդ. դաս.	9-րդ. դաս.	4-րդ. դաս.	9-րդ. դաս.	4-րդ. դաս.	9-րդ. դաս.
Հայոց լեզու	15	16	7,2	5,9	7,4	14,2
Մաթեմատիկա	15	16	7	5,8	6	11,8
Ռուսաց լեզու	15	9	-	6,2		14,7
Անգլերեն	15	7	-	6		14
Հայոց պատմ.	-	16	-	6		12,7
Ֆիզիկա	-	3	-	8		18
Կենսաբան.	-	9	-	5,9		12,9
Աշխարհագր.	-	4	-	6,5		13,3
Քիմիա	-	-				
Ֆիզկուլտ.	15	16	8,7	8,8		9,2
Ընդամենը	75	96	22,9	59,1	13,4	120,8

Տվյալներ մարզային, հանրապետական, միջազգային առարկայական օլիմպիադաներում ու մարզական, մշակութի ոլորտում ստեղծագործական և կատարողական մրցույթներին սովորողների մասնակցության վերաբերյալ.

Ցուցանիշ	2020-2021 ուստարի	2021-2022 Ուստարի	2022-2023 ուստարի
Մարզային առարկայական օլիմպիադաներիմասնակիցների թիվը և տոկոսը՝հաստատության սովորողների ընդհանուր թվի համեմատ			3աշ. 2%
Մարզային առարկայական օլիմպիադաներին մրցանակներ ստացած սովորողների թիվը և տոկոսը			1աշ. 33%
Հանրապետական առարկայական օլիմպիադաների մասնակիցների թիվը և տոկոսը՝ հաստատության սովորողների ընդհանուր թվի համեմատ			1աշ.0,6%

Հանրապետական առարկայական օլիմպիադաներին մրցանակներ ստացած սովորողների թիվը և տոկոսը			1աշ. 100%
Մարզային և հանրապետական մարզական ումշակույթի ոլորտում ստեղծագործական ու կատարողական մրցույթների մասնակիցների թիվը և տոկոսը՝ հաստատության սովորողների ընդհանուր թվի համեմատ			68աշ.39%
Միջազգային մարզական ու մշակույթի ոլորտում ստեղծագործական ու կատարողական մրցույթներին մրցանակների ստացած սովորողների թիվը և տոկոսը			1աշ.0,5%

3. ՆԵՐԱՌԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Ներառական կրթությունը՝ յուրաքանչյուր երեխայի համար, այդ թվում՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող, զարգացման առանձնահատկություններին համապատասխան, անհրաժեշտ պայմանների և հարմարեցված միջավայրի ապահովման միջոցով կրթական գործընթացին առավելագույն մասնակցության և հանրակրթության պետական չափորոշիչով սահմանված արդյունքի ապահովումն է:**Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձը**՝ խոսքի և լեզվի, հաղորդակցման, լսողության, տեսողության, ինտելեկտի (մտավոր), հուզական, վարքի, շարժունակության և այլ խնդիրներով պայմանավորված՝ ուսուցման հետ կապված դժվարություններ ունեցող, ինչպես նաև բացառիկ ընդունակություններ ունեցող անձն է, որին հանրակրթական հիմնական ծրագրերը յուրացնելու համար անհրաժեշտ են կրթության առանձնահատուկ պայմաններ, ներառյալ՝ խելամիտ հարմարեցումներ:

Կիրառվում է երեխայի կրթությանն աջակցելու եռաստիճան համակարգ: կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաները մանկավարժահոգեբանական աջակցություն են ստանում 3 մակարդակում՝ հանրակրթական դպրոցում, տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնների և հանրապետական կենտրոնի կողմից:



3.1 Հաստատությունում ներառական կրթության և հավասարության ապահովում

Դպրոցում երեխայի ներառականությունը խթանող թիմային աշխատանքներ են տարվում դասվարների, հոգեբանի, ուսուցչի օգնականի կողմից; Հանդիպումներ են կազմակերպվում ծնողների հետ, դրանք լինում են խորհրդատվություններ, երեխայի վարքագծի պարզաբանումներ:

ԿԱՊԿՈՒ ունեցող երեխաների նկատմամբ դասարանների աշակերտների նախնական վերաբերմունքը դրական է,այն ավելի բարյացկամ է էմպատիկ/կարեկցական/ որակավորում է ստանում մանկավարժների և հոգեբանի կողմից տարվող աշխատանքների շնորհիվ:Ուսումնական հաստատության ռեսուրս-սենյակ այցելում են ԿԱՊԿՈՒ սովորող10 աշ.- 79%:Ուսումնական հաստատության ռեսուրս-սենյակ այցելող ԿԱՊԿՈՒ ունեցող սովորողների 1 խնամակալ,10 ծնող:

Ուսումնական հաստատությունն ունի ԿԱՊԿ ունեցող սովորողների հոգեբանամանկավարժական աջակցության թիմ՝ ուսուցչի օգնական ,հոգեբան Ուսումնական հաստատության դասասենյակները ապահովված են լուսավորվածությամբ,գույքով,դիդակտիկ նյութերով;Ուսուցչի ուշադրության դիտակետում է գտնվում ԿԱՊԿՈՒ երեխան:

Առկա էն ուսումնամեթոդական նյութեր,համապատասխան աջակցություն է ցուցաբերվում դասարաններում/1-4/ խիստ անհրաժեշտության դեպքում՝ պահպանելով պահանջվող հեռավորություն և հիգիենայի կանոնները:Տարվում են անհատական աշխատանքներ:

Ուսումնական հաստատությունում հարցման արդյունքում պարզաբանվել են ներառականությունը խաթարող սոցիալական խոչընդոտները :Դպրոցի բոլոր ուսուցիչները կողմ են ներառական կրթությանը:Ուսուցիչները ունեն հավասար վերաբերմունք բոլոր երեխաների նկատմամբ,անկախ նրանց միջև եղած տարբերություններից և նրանց առանձնահատուկ կարիքներից:Հարցման արդյունքները դրական են:Ուսուցիչները կարողանում են հայտնաբերել կարծրատիպեր ամրապնդող վարքագիծ կամ երևույթ դասարանում,դպրոցում,ուսումնական նյութերում և նույնիսկ սեփական վարքագծում:Ուսումնական հաստատությունն իրականացնում է սոցիալական աջակցության ծրագրեր սոցիալապես անապահով ընտանիքների սովորողների



4. ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԵՎ ԽՆԴԻՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ

Զարգացման ծրագրի նպատակներն ու ակնկալվող արդյունքները.

Դպրոցի զարգացման ծրագրի նպատակն է զարգացնել համակողմանի հայրենասեր և մարդասեր մարդկանց, որոնց առաջնահերթ նպատակներն են ազգային, սոցիալական և անհատական զարգացումը, ինչպես նաև ապահովել բարձրորակ կրթություն և ուսուցում՝ հենվելով ժամանակակից կրթական տեխնոլոգիաների և ժամանակակից կրթական ուղղությունների վրա:

Ծրագրի նպատակը և ակնկալվող արդյունքները մշակվել են մի քանի ելակետերի հիման վրա:

Հիմնվելով սահմանված նպատակների վրա և աշակերտների արդյունավետ ժամանակակից կրթություն ապահովելու անհրաժեշտության տեսանկյունից անհրաժեշտ է.

- Ստեղծել բարենպաստ պայմաններ աշակերտների առողջության պահպանման և անվտանգ կյանքի համար Հագեցված մարզադահլիճի պահպանում և սպորտային խմբակների կազմակերպում
- Ստեղծել բարենպաստ պայմաններ աշակերտների և մանկավարժների արդյունավետ գործունեության համար
- Ամրապնդել դպրոցի նյութատեխնիկական հիմքը, ձևավորել առարկայական դասարաններ և տեսադասարաններ
- Արդիականացնել դպրոցի կողմից օգտագործվող տեղեկատվական համակարգերը ծրագիրը

4.1 Նոր կրթական տեխնոլոգիաների, մոդելների և ՏՀՏ գնահատման գործիքների ներդրում

Ապահովել դպրոցներին բարձրակարգ մանկավարժական կազմով, համատեղ ջանքերով աջակցել ուսուցիչների որակավորման կատեգորիաների շնորհման գործընթացին, մասնակցել կամավոր ատեստավորման գործընթացին և կրթական գործընթացում շարունակաբար կիրառել ժամանակակից մեթոդներ, որոնք կնպաստեն աշակերտների ձևավորմանն ու զարգացմանը: Ձգտել ստեղծել համապատասխան պայմաններ, որպեսզի յուրաքանչյուր աշակերտ, այդ թվում՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող աշակերտ, կարողանա օգտվել հատուկ կրթության, առողջապահական, հոգեբանական, սոցիալական և այլ ծառայություններից: Դպրոցի կառավարման համակարգը դարձնել լավ հարթակ մանկավարժական աշխատողների , ծնողների և աշակերտների համար:

Ակտիվորեն ներգրավել դպրոցի խորհրդատվական մարմիններին, հատկապես ծնողական և աշակերտական խորհուրդներին դպրոցի կառավարմանը:

Նպատակային աջակցություն է ցուցաբերվում ծնողների, աշակերտների, ուսուցիչների դպրոցի միջև փոխադարձ համագործակցության ամրապնդման համար և միջոցներ են ձեռնարկվում տեղական և միջազգային կազմակերպությունների հետ համագործակցություն, համատեղ կրթական գործընթացի բարելավման ուղղությամբ նոր արդյունքների հասնելու համար: Նոր կառուցվող մարզադահլիճը խթան կհանդիսանա աշակերտների ներգրավվածությանը առողջ ապրելակերպի խմբակներին: Մասնագիտական կողմնորոշման հանարավորություն կստեղծվի աշակերտների համար ապահովելով .

- առարկայական դասասենյակների ստեղծում
- լաբորատոր և գործնական աշխատանքների կատարում
- գրադարանային կրթական միջոցառումների կազմակերպում
- առարկայական րթական միջոցառումների կազմակերպում
- նախագծային և հետազոտական աշախատանքների ներկայացում մարզային մրցույթներում
- ուսուցողական էքսկուրսիաների կազմակերպում
- սպորտային մրցաշարերի կազմակերպում /միջդասարանական, միջդպրոցական/

Կտրամադրվի ժամանակակից որակյալ կրթություն՝ դրանով իսկ ավելացնելով հայրենասեր, հաջողակ և մրցունակ շրջանավարտների թիվը, ընդլայնելով աշակերտների անհատական զարգացման համար անհրաժեշտ նախադրյալները, աշակերտները ձեռք կբերեն անհրաժեշտ գիտելիքներ, կարողություններ և հմտություններ հասարակության մեջ լիարժեք ինտեգրվելու համար. կձևավորի վերլուծական և քննադատական մտածողություն՝ ապահովելով ազատ քաղաքացիների ձևավորումը, կբարելավի ուսուցիչների մասնագիտական որակը, կբարձրացնի նրանց գործունեության արդյունավետությունը:

Ուսուցման գործընթացում մենք պետք է մեծ նշանակություն տանք արտադպրոցական և արտադասարանային ուսուցմանը՝ պայմաններ ստեղծելու աշակերտների հետաքրքրությունները, հոբբիները, ստեղծագործականությունը, ստեղծարարությունը և այլն: Դպրոցի ֆիզիզկական պայմանները, ներառյալ՝ սանիտարահիգենիկ պայմանները, ենթակառուցվածքների առկայությունը և որակը, դպրոցի ներքին հարդարանքը , անուղղակի ազդեցություն ունեն , մի կողմից , աշակերտների առաջադիմության , մյուս կողմից, ուսուցիչների աշխատանքի արդյունավետության վրա: Աշակերտները իրենց առօրյայի զգալի մասն անց են կացնում դպրոցներում , հետևաբար նրանց բարոոյահոգեբանական վիճակը , ֆիզիկական և մտավոր առողջությունը մեծապես պայմանավորված են այն պայմաններով և միջավայրով, որն առկա է դպրոցում:

Նպատակ 1. Մանկավարժական համակարգմի որակական չափանիշների համապատասխանութուն նոր պահանջներին

- Մանկավարժների հմտությունների համապատասխանություն նոր ՀՊՉ պահանջներին:

- Ուսուցիչների ինքնազարգացմանն ուղղված գործողություններ /վրապատրաստումների, խորհրդատվությունների, հերթական և պարտադիր ատեստավորումների մասնակցություն/
- Մանկավարժական համակարգմի որակական չափանիշների համապատասխանութուն նոր պահանջներին:
- ՏՀՏ գիտելիքների ավելացումը՝ ժամանակի հրամայական:Նորարական դասերի պլանավորումն կազմակերպում
- Նոր ՀՊՉ-ին համապատասխան կրթության ապահովում և արդյունքների վերլուծություն
- Ժամանակակից կրթական պահանջներին համապատասխան ուսումնական միջավայրի և նյութատեխնիկական բազայի ապահովում
- Դպրոցում մարզադահիճի շինարարկան աշխատանքների կատարման արդյունքում, սովորողին կտրամադրվի ժամանակակից և որակյալ կրթություն , կավելանա աշակերտների առողջության պահպանման նպաստող նախապայմաններ

Նպատակ 2. Աշակերտների վերազինում նոր գիտելիքներով, կարողություններով ու հմտություններով

- Ուսուցման և զարգացման ապահովումը կրթական ծրագրերի շրջանակում, կարողունակությունների զարգացում
- Սովորողների ուսուցման և դաստիարակության իրավունքի իրացումը հանրակրթական
  պետական չափորոշչին համապատասխան:

Նպատակ 3. Ուսումնադաստիարակչական աշխատանքների կազմակերպում և վերահսկողություն

- Շարունակել անընդմեջ և կայուն աշխատանքներ տանել ուսումնադաստիարակչական բարձր մակարդակի ապահովման համար
- Գրադարանի գրքային ֆոնդի համալրում նոր գրականությամբ
- Շարունակել կայուն աշխատանք տանել գրադարանավար- ուսուցիչ համագործակցությանը / սեր դեպի ընթերցանություն/
- Ավելի աշխուժացնել դպրոց- ծնող- աշակերտ եռամիասնությունը՝ ցանկալի արդունքի հասնելու համար
- Ուշադրություն դարձնել դպրոցի հարակից տարածքի կանաչապատմանը մաքրությանը, թեքահարթակների, բազրիքների և աղբամանների առկայությանը
- Շարունակել անընդմեջ և կայուն աշխատանքներ տանել դպրոցում բուժսպասարկման,բուժզննումների առակա վիճակի գանահատման արդյունքների վերաբերյալ

Նպատակ 4. Ճաշարանում սեղան-աթոռների ձեռքբերում

- Երեխաների ճաշարանը սեղան- աթոռները մաշված են:
- Ճաշարանիի աշխատանքները բարելավելու նպատակով անհրաժեշտ է ուշադրություն դարձնել սննդի բազմազանությանը և թարմությանը
- Ապահովել սանիտարահիգենիկ միջավայր

Նպատակ Խնդիրներ	Գործողություններ	1.Անհրաժեշտ միջոցներ 2.Ժամկետ 3.Պատասխանատու	Ռիսկեր	Ռիսկերի կանխման գործողությունները Արդյունքների չափման մեխանիզմներ
Բարձրակարգ կրթություն ապահովելու համար համապատասխան միջավայրի ստեղծում	Սովորողների համար ապահովել նախաձեռնողի դերում հանդես գալու, դասին ակտիվություն ցուցաբերելու հնարավորություն Անցկացնել կարողունակությունների և հմտությունների ձևավորմանն ուղղված դասեր՝ հագեցած ուսուցման ժամանակակից մեթոդներով, ՏՀՏ-ներով: Սովորողների ստեղծագործական կարողությունների զարգացմանն ուղղված թեմատիկ նախագծերի իրականացում	2024-2029թթ. շարունակաբար Տնօրեն Մ/մ նախագահ Մանկավարժական համակազմ Ֆինանսական միջոցներ չի պահանջում	Ուսման նկատմամբ անտարբերություն	Ուսուցիչների համար հաճախակի մեթոդական և մասնագիտական վերապատրաստումների, սեմինարների անցկացում
Զարգացնել ուսուցիչների և Դպրոցի ղեկավարների նորարարական, ստեղծագործ	Մասնակցել ՀՊՉ-ի «Լավագույները» մրցույթին Կազմակերպել ԿՁՆԱԿ-ի համապատասխան մասնագետի	2024-2029թթ. շարունակաբար Տնօրեն Մ/մ նախագահ Մանկավարժական համակազմ Ֆինանսական	Պահպանողական հայացքներով ուսուցիչներ 2.Նորարարությունները մերժող կամ	ՏՀՏ դասերի հաճախակի անցկացում , համագործակցային մեթոդների վերաբերյալ զեկուցումների

ական, մասնագիտակ ան ներուժը	խորհրդատվական սեմինար դպրոցի ղեկավարների և ուսուցիչների հետ Մասնակցել նորարարական ստեծագործական մրցույթներին և նախագծերին	միջոցներ չի պահանջում	դժվար ընդունող ուսուցիչներ	պատրաստում, փորձարարակա ն դասերի վարում, դասալսումների քննարկում,աջա կցություն
ՀՊՉ-ներին համապատաս խան ուսումնական գործընթացի պլանավորում և անցկացում	Մեթոդական միավորումներով մշակել չափորոշչային նոր պահանջների հաջորդականությունը, Նախագծային ուսուցման, երկարօրյա ուսուցման և խմբակների համար ստեղծել նպաստավոր պայմաններ Իրականացնել փոխադարձ դասալսումներ դասարաններում	2024-2029թթ. շարունակաբար Տնօրեն Մ/մ նախագահ Մանկավարժական համակազմ Ֆինանսական միջոցներ չի պահանջում	Սխալ կամ թերի պլանավորվա ծ գործընթաց	ՈՒսումնական բնագավառների բովանդակությ ան և դասավանդման մեթոդների արդիականացո ւմ կրթության չափորոշչին համապատասխ ան
Հաստատությ ան ուսումնական միջավայրը հարմարեցնել սովորողների որակյալ ուսուցմանը և ուսումնառությ ան կազմակերպմ անը: Սովորողների առանձնահա տուկ կարիքների հաշվի առնում	Բազմամասնագիտակ ան թիմի առողջ համագործակցությու ն, ԱՈՒՊ- ի մշակում: ԿԱՊԿՈՒ սովորողների կրթական կարիքների հաշվի առնում, մանկավարժական մեթոդների կիրառում, խելամիտ հարմարեցումների ստեղծում	1.Համագործակցությ ուն ՏՄԱԿ-ի, շահառու կազմակերպություն ների հետ, մասնագիտական գրականություն, փորձի փոխանակում Ֆինանսական միջոցներ չի պահանջում: 2.2024-2029 թթ. շարունակաբար 3.Տնօրեն Մ/մ նախագահ Մանկավարժական համակազմ Բազմամասնագիտա կան թիմ	Ուսուցիչների մասնագիտակ ան ու մեթոդական անբավարար գիտելիքներ ու հմտություննե ր : Դժվարությունն ներ ԱՈՒՊ-ի կազմման հարցում	ՏՄԱԿ-ի,ՀՄԿ-ի հետ համագործակցո ւթյան խորացում, վերապատրաս տումներ

Մշակել և իրականացնել լրացուցիչ կրթության համալիր միջոցառումներ՝ յուրաքանչյուր երեխայի ներդաշնակ զարգացումն ապահովելու համար՝ հաշվի առնելով անհատական կարիքները, ճանաչողական հետաքրքրությունները	Սովորողների ստեղծագործական կարողությունների զարգացմանն ուղղված թեմատիկ նախագծերի իրականացում Տարբեր թեմատիկ ուղղվածության առցանց դասերի, վեբինարների կազմակերպում : Տեղեկատվական գորիքների կիրառություն ,անհատական կարիքներին համապատասխան	Դպրոցի միջոցներով .2024-2029 թթ. շարունակաբար	Ուսուցիչների և աշխատակազմի մոտիվացիայի պակաս	սովորողների ստեղծագործական կարողությունների զարգացում թեմատիկ Նախագծերին մասնակցելու միջոցով սովորողների տեղեկատվական մշակույթի մակարդակի բարձրացում
Պարտադիր և կամավոր ատեստավորումների մասնակցություն	Խրախուսել ուսուցիչների մասնակցությունը պարտադիր և կամավոր ատեստավորումների ն, ցուցաբերել աջակցություն	Դպրոցի միջոցներով .2024-2029 թթ. շարունակաբար Տնօրեն Մանկավարժական համակազմ Կրթության կառավարման մարմին Շահառու կազմակերպություն	Անտարբեր և պահպանողական ուսուցիչներ Նորարարությունից խուսափող ուսուցիչներ	Ուսուցիչների համար հաճախակի անցկացնել. հարցումներ, ճանաչողական քննարկումներ, բարձրացնել վերջիններիս պատասխանատվությունը, սովորելու, ինքնակրթվելու մոտիվացիան
Մեդիագրագիտությունը դարձնել պարտադիր ոչ միայն սովորողների, այլև մանկավարժական համակազմի բոլոր անդամների համար՝ անկախ	Ապահովել փոխօգնության և համագործակցության կայուն մթնոլորտ	.2024-2029 թթ. շարունակաբար Տնօրեն Ուս. Գծով տնօրենի տեղակալ Մ/մ նախագահ Մանկավարժական համակազմ	Համագործակցությունից խուսափող ուսուցիչներ	Խրախուսել համագործակցության, փոխօգնության պատրաստ ուսուցիչներին , կազմակերպել վերապատրաստումներ

տարիքից				
Ուսուցիչների մեջ ձևավորել հայտորոշիչ , ձևավորող, ամփոփիչ գնահատման իրականացման բավարար հմտություններ	Կազմակերպել ԿԶՆԱԿ-ի համապատասխան մասնագետի խորհրդատվական սեմինար դպրոցի ՄՄ նախագահների և ուսուցիչների հետ :	ՈՒսուցիչների ուժերով մշակել հայտորոշիչ, ձևավորող , ամփոփիչ գնահատման գործիքներ 2024-2029 պարբերաբար	Ուսուցիչների և աշխատակազմի տեղեկատվության, մոտիվացիայի պակաս:	Ուսուցիչների մասնագիտական իրավասության և շարժունակության բարձր մակարդակ
Ազգային երգ ու պար խմբակի շրջանակներում համագործակցել մշակութային դպրոցների հետ	Կազմակերպել մրցույթ «Ազգային երգ ու պար»-ը մեր դպրոցում, ինչպես նաև մասնակցել ազգային տարաբնույթ միջոցառումների	2024-2029 պարբերաբար	Համագործակցությունից խուսափող ուսուցիչներ	Մշակութային և հասարակական կազմակերպությունների հետ համագործակցության համակարգի ստեղծում
Ամրապնդել համագործակցությունը կառավարման խորհրդի հետ	Կառավարման խորհրդին ներգրավել դպրոցի կրթական գործընթացին, առկա խնդիրների բացահայտմանը և դրանց լուծման ուղիների սահմանումը Կառավարման խորհրդին ներկայացնել Ծրագրի կատարման ամենամյա հաշվետվություն	2024-2029 պարբերաբար	Համագործակցության դժվարություններ	Խրախուսել և մոտիվացնել ակտիվ համագորակցությունը կառավարման խորհրդի անդամների, համայնքի հետ
Մանկավարժական խորհրդի աշխատանքների արդյունավետության բարձրացում	Առաջարկությունների քննարկում, նախաձեռնող ուսուցիչներին աջակցության տրամադրում Քննարկել ԿԱՊԿՈՒ սովորողի անհատական ուսուցման պլանը, ուսուցման	Մարդկային ռեսուրսի ներուժ Ֆինանսական միջոցներ չի պահանջում 2024-2029 թթ. շարունակաբար Տնօրեն Ուս գծով տեղակալ Մ/մ Մանկավարժական	Համագործակցության դժվարություններ, արագ արձագանքման բացակայություն	Ակտիվ ուսուցիչների համար, նյութատեխնիկական աջակցություն, խմբակների տրամադրում, նախագծային աշխատանքների

	բովանդակության, սովորողների ուսումնառության որակի, նրանց հետ իրականացվող արտադասարանական և արտադպրոցական աշխատանքների կազմակերպման, արտադասարանական խմբակների և ուսումնական կաբինետների ձևավորման, հանրակրթական ուսումնական առարկաների չափորոշիչների և ծրագրերի, ուսումնական պլանների նախագծերը;	համակազմ		պլանավորման իրականացման աջակցություն
Խորացնել ծնողների ներգրավում դպրոցական կյանքում	Բաց դռների օրեր ծնողների համար Ծնողների մտահոգությունների, դիտողությունների քննարկում, համագործակցության բարձր մակարդակ	Ծնողական ժողովներ, հանդիպում-քննարկումներ, բաց դռների օրեր Ֆինանսական միջոցներ չի պահանջում 2024-2029 թթ. շարունակաբար Տնօրեն Մանկավարժական համակազմ Ծնողական խորհուրդ	Համագործակցությունից խուսափող ծնողներ	Մեծացնել ծնողական համայնքի հետ համագործակցության եզրերը, լսել ծնողների մտահոգությունները
Աշակերտական խորհրդի աշխատանքների արդյունավետության բարձրացում	ԱԽ ներգրավել դպրոցի կրթական գործընթացին, առկա խնդիրների բացահայտմանը և դրանց լուծման ուղիների սահմանումը Ինքնավարության օրերի անցկացում	Ֆինանսական միջոցների տրամադրում դպրոցի բյուջեից: 2024-2029 թթ. շարունակաբար Տնօրեն Մանկավարժական համակազմ Աշ. խորհուրդ	Մոտիվացիայի բացակայություն	Դպրոցի ԱԽ ընտրություններ հանձնախմբերի ձևավորում Խրախուսագրերի, շնորհակալագրերի տրամադրում ակտիվ

	Աշակերտական խորհրդին ռեսուրսների տրամադրում, կրթական մրցույթների, ծրագրերի մասնակցություն			աշակերտներին
Ստեղծել շփման բարենպաստ մթնոլորտ՝ «ուսուցիչ-աշակերտ-ծնող» համակարգում սովորողների կրթման գործընթացում,	Դպրոցի կայքում համապատասխան տեղեկատվական և մեթոդական նյութերի տեղադրում, ինչպես նաև հատուկ կարիքներով երեխաներ մեծացնող ծնողների հոգեբանական, մեթոդական և խորհրդատվական աջակցության տարբեր թեմաներով լավագույն փորձի նկարագրությունը	Ֆինանսավորում չի պահանջվում, առկա մասնագիտական և փորձագիտական գրականություն:	Մոտիվացիայի բացակայություն	Ծնողներին (օրինական ներկայացուցիչների) տեղեկատվական և կրթական աջակցություն
Հաստատությունում մասնակցային միջավայրի ապահովում	Բոլոր ուսուցիչների և աշակերտների համար ապահովել հավասարություն՝ ներգրավելով վերջիններիս տարատեսակ ծրագրերի, նախաձեռնությունների մեջ	Միջոցառումներ, ծրագրեր, նախաձեռնություններ Դպրոցի միջոցներով 2024-2029 թթ. շարունակաբար Տնօրեն Կրթական գործընթացի մասնակիցներ	Նորարարությունները և համագործակցությունը մերժող կամ դժվար ընդունող ուսուցիչներ	Կատարել աշխատանքի հավասար բաժանում՝ հաստատության կառավարման և այլ հարցերին հավասարապես մասնակից դարձնելով բոլոր շահառուներին
Ներառական միջավայրի ապահովում	Ստեղծել առողջ ու հարմարավետ ուսումնական միջավայր ԿԱՊԿ ունեցող աշակերտների համար: Բարձրացնել բազմամասնագիտական թիմի մասնագիտական ու	Համագործակցություն ՀՄԿ-ի,ՏՄԱԿ-ի, ԿԱՊԿ ունեցող սովորողների ծնողների հետ Ֆինանսական միջոցներ չի պահանջում: 2024-2029 թթ. շարունակաբար .Տնօրեն	Անբավարար ֆինանսական միջոցներ՝ խելամիտ հարմարցումներ ապահովելու համար	Բարձրացնել իրազեկվածությունը ներառականության վերաբերյալ ԿԱՊԿ ունեցող սովորողներին ներգրավել տարատեսակ ծրագրերում

	մեթոդական հմտությունները	Բազմամասնագիտական թիմ Մանկավարժական համակազմ		
Բարեկարգ, անվտանգ, մաքուր, սանիտարահիգենիկ պայմաններին համապատասխան շենքային պայմանների ստեղծում	Կատարել վերանորոգման, բարեկարգման աշխատանքներ Հետևել դպրոցում սանիտարահիգենիկ կանոնների պահպանությանը Հետևել դպրոցում անվտանգության կանոնների պահպանությանը, մեծացնել հաստատությունում անցկացվող քաղպաշտպանական միջոցառումների թիվը Ցանկապատել դպրոցամերձ տարածքը	Պետական ֆինանսավորում, դպրոցի խնայողություններ 2024-2029 թթ. շարունակաբար Տնօրեն Վարչատնտեսական մասի համակարգող Տնտեսվար Կառավարման խորհուրդ	Ֆինանսական միջոցների անբավարարություն	Կամավորների ներգրավում Հոգաբարձուների, շրջանավարտների խորհուրդների ստեղծում Դրամաշնորհներ Բարերարներ Ձեռնարկատիրական գործունեություն
Նյութատեխնիկական բազայի, մարզագույքի ձեռքբերում	Ձեռք բերել ժամանակի պահանջներին համապատասխան համակարգչային տեխնիկա, ինչպես նաև ապահովել համակարգիչները անհրաժեշտ ծրագրերով Ապահովել քիմիայի, ֆիզիկայի, լաբորատորիան անհրաժեշտ գույքով, սարքավորումներով և նյութերով , մարզադահլիճի կահավորում անհրաժեշտ գույքով	Դպրոցի խնայողություններ Դրամաշնորհներ Բարերարներ 2024-2029 թթ. շարունակաբար Տնօրեն Վարչատնտեսական մասի համակարգող Մանկ. համակազմ Կառավարման խորհուրդ	Անսպասելի կարիքների հայտնաբերում Ֆինանսական միջոցների անբավարարություն	Նվիրատվություններ Դրամաշնորհներ Շահառու կազմակերպությունների հետ արդյունավետ համագործակցություն Կրթական ծրագրերի մասնակցություն
Առարկայական կաբինետների ստեղծում	Հիմնել էլ. գրատախտակներով, համապատասխան գույքով հագեցած առարկայական կաբինետ:	Դպրոցի խնայողություններ Դրամաշնորհներ Բարերարներ 2025-2026 ուստարի Տնօրեն	Ֆինանսական միջոցների անբավարարություն	Դպրոցի խնայողությունների օգտագործում Բարերարների ներգրավում

	Կաբինետների համար ձեռք բերել դիդակտիկ նյութեր, զննական պարագաներ	Վարչատնտեսական մասի համակարգող Տնտեսվար Կառավարման խորհուրդ		
Իրականցնել ներքին հարդարման աշխատանքներ	Փորձագիտական եզրակացության հիմնա վրա խնդիրը ներկայացնել մարզպետարան ԿԳՄՄՆ թույլտվությամբ հովանավորների աջակցություն	Դպրոցի բյուջե, և օրենքով չարգելված այլ ֆինանսական աղբյուրներ 2024 մայիս - օգոստոս	Ֆինասական միջոցների բացակայություն	Խնայողությունների օգտագործում 2.Բարերարների ներգրավում

4.2 ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

Կրթության որակը բարելավելու համար անհրաժեշտ է սահմանել գնահատման արժեքային համակարգ, որի անմիջական աջակիցները պետք է լինեն դպրոցական կրթական գործընթացի մասնակիցները՝ աշակերտներ, սովորողների ծնողներ, ուսուցիչներ և այլ մանկավարժական աշխատակիցներ, վարչական աշխատողներ, դպրոցի կառավարման հանձնաժողովներ, խորհրդատուներ: Սա դպրոցի կառավարումն ավելի թափանցիկ և արդյունավետ կդարձնի: Դրա համար անհրաժեշտ է զարգացնել նրանց գործունեությունը և բարձրացնել նրանց դերը: Դպրոցի զարգացման ծրագրի արդյունքների գնահատումը կարևոր նշանակություն ունի հաստատության արդյունավետ կառավարման համար, և, հետևաբար, գնահատված գործողությունները պետք է համապատասխան կերպով արտացոլեն հաստատության գործունեությունը ըստ բաժինների: Փաստորեն գնահատման նպատակը ոչ միայն որակական և քանակական ցուցանիշներ առաջարկելն է, այլ նաև արտացոլման հնարավորությունը:Սա հնարավորություն է տալիս օբյեկտիվորեն տեսնել թերություններն ու բացթողումները, ամբողջական ու թերի ցուցանիշները, որոնք գործիք կդառնան առավել նպատակային գործողությունների համար: Գնահատումը օբյեկտիվորեն իրականացնելու համար կարևոր է, որ գնահատումը հիմնված լինի գնահատվող գործունեության անհատական և փոխկապակցված արդյունքների վրա, քանի որ հաստատության թե՛ ղեկավարությունը, թե՛ ուսումնական գործընթացները անբաժանելի են և մշտապես ամրապնդում են միմյանց, ԴԶԾ-ի գնահատումը պետք է ներառի ռազմավարական նշանակության բոլոր ոլորտները: Կրթության որակի գնահատման և կրթական

գործընթացի արդյունավետ կառավարման բարձր որակական և քանակական ցուցանիշները շահում են հետևյալ խնդիրների արդյունավետ լուծումից.

Կրթության որակի գնահատման չափորոշիչներ և կրթական գործընթացի արդյունավետ կառավարում

Ապահովել աջակցող, մասնակցային կրթական գործընթաց, որը հիմնված է ՀՊՉ-ի վրա:

Առաջարկում է դասընթացներ ժամանակակից ուսուցման մեթոդներով և տեխնիկայով:

Ապահովել աշակերտներին առողջ սոցիալական և հոգեբանական միջավայր:

Հիմնական դպրոցն ավարտող աշակերտները, զինված լինեն մրցունակ կարողունակություններով և հմտություններով, կարողանան ցուցաբերել բարձր որակական և քանակական ցուցանիշներ:

Աշակերտներ ովքեր անկախ են, նախաձեռնող, ստեղծագործ, մտածող, տեսակետ ունեցող և առանձնահատուկ: Ունենալ մրցունակ, ընդունակ և նորարար դասավանդող թիմ:

№	Գնահատման ենթակա գործողության բնույթը	Արդյունքի գնահատականը	Արդյունքի գնահատման չափանիշները
1	Կրթութական գործընթացի մասնակիցների մասնակցությունը հաստատության կառավարմանը և ուսումնադաստիարակչական գործընթացին	Գերազանց	Կրթական գործընթացի բոլոր մասնակիցները հավասարապես մասնակցում են հաստատության կառավարմանը և ուսումնադաստիարակչական գործընթացին
		Լավ	Կրթական գործընթացի բոլոր մասնակիցները մասամբ են մասնակցում հաստատության կառավարմանը և ուսումնադաստիարակչական գործընթացին
		Անբավարար	Կրթական գործընթացի բոլոր մասնակիցները բավարար չափով չեն մասնակցում հաստատության կառավարմանը և ուսումնադաստիարակչական գործընթացին
2	Բազմակարծության ապահովումը հաստատությունում	Գերազանց	Կրթական գործընթացի բոլոր մասնակիցներն ունեն ազատ խոսքի իրավունք և հաստատությունում բազմակարծության նկատմամբ կաշկանդվածություն առկա չէ:
		Լավ	Կրթական գործընթացի բոլոր մասնակիցներն ունեն ազատ խոսքի իրավունք, սակայն նկատելի է բազմակարծության պակաս:
		Անբավարար	Կրթական գործընթացի բոլոր մասնակիցներն չունեն ազատ խոսքի իրավունք, նկատելի է բազմակարծության պակաս:
3	Ներառական միջավայրի ապահովումն ու պաշտպանությունը հաստատությունում	Գերազանց	Հաստատությունում ներառական միջավայրը բարձր հիմքերի վրա է:
		Լավ	Հաստատությունում ներառական միջավայրն ունի կատարելագործման կարիք:

		Անբավարար	Հաստատությունում կարևորություն չի տրվում ներառական միջավայրի ապահովմանը:
4	Նորարար և կարողունակ ուսուցիչների արժևորումն ու խրախուսումը հաստատությունում	Գերազանց	Ուսումնական գործընթացում որակական և քանակական բարձր ցուցանիշներ ապահովող բոլոր մանկավարժները մշտապես խրախուսվում և արժևորվում են հաստատության կողմից
		Լավ	Ուսումնական գործընթացում որակական և քանակական բարձր ցուցանիշներ ապահովող բոլոր մանկավարժները երբեմն խրախուսվում և արժևորվում են հաստատության կողմից
		Անբավարար	Ուսումնական գործընթացում որակական և քանակական բարձր ցուցանիշներ ապահովող մանկավարժները չեն խրախուսվում և չեն արժևորվում հաստատության կողմից
5	Անբավարար արդյունք: Ուսումնական գործընթացում որակական և քանակական բարձր ցուցանիշներ ապահովող մանկավարժները չեն խրախուսվում և չեն արժևորվում հաստատության կողմից	Գերազանց	Ուսումնական հաստատությունում ստեղծված են ուսուցիչների ինքնակրթության և զարգացման համար բոլոր անհրաժեշտ միջոցներն ու ռեսուրսները
		Լավ	Ուսումնական հաստատությունում մասամբ առկա են ուսուցիչների ինքնակրթության և զարգացման համար անհրաժեշտ միջոցներն ու ռեսուրսները
		Անբավարար	Ուսումնական հաստատությունում առկա չեն այն ռեսուրսներն ու միջոցները, որոնք անհրաժեշտ են ուսուցիչների ինքնակրթության և զարգացման համար:
6	Օրինակելի փորձի փոխանակում, համագործակցության, փոխօգնության մթնոլորտի ստեղծում	Գերազանց	Հաստատության ուսուցիչները լիարժեքորեն համագործակցում են, օգնում միմյանց, անց են կացնում ինտեգրված դասեր, համատեղ միջոցառումներ: Առկա է փոխօգնության առողջ միջավայր:
		Լավ	Հաստատության ուսուցիչները մասնակիորեն են համագործակցում, ինտեգրված դասեր, համատեղ միջոցառումներ հազվադեպ են անցկացվում:
		Անբավարար	Հաստատության ուսուցիչները գրեթե չեն համագործակցում, փոխօգնության մթնոլորտ առկա չէ:
7	Համայնքի հետ համագործակցային հարաբերությունների խորացում և շարունակականության ապահովում	Գերազանց	Համայնքի հետ առկա է սերտ և շարունակական համագործակցություն:
		Լավ	Համայնքի հետ համագործակցությունը ոչ հաճախակի է
		Անբավարար	Համայնքի հետ համագործակցություն առկա չէ

8	Կրթության կառավարման մարմինների հետ համագործակցային հարաբերությունների խորացում և շարունակականության ապահովում	Գերազանց	Ուսումնական հաստատությունը լիարժեքորեն, բաց և թափանցիկ համագործակցում է կրթության կառավարման մարմինների հետ
		Լավ	Ուսումնական հաստատությունն ունի որոշակի դժվարություններ կրթության կառավարման մարմինների հետ համագործակցության առումով
		Անբավարար	Ուսումնական հաստատությունն ընդառաջ չի գնում կրթության կառավարման մարմինների հետ համագործակցությանը
9	Շահառու կազմակերպությունների հետ համագործակցային հարաբերությունների խորացում և շարունակականության ապահովում	Գերազանց	Ուսումնական հաստատությունը լիարժեքորեն և արդյունավետ կերպով համագործակցում է շահառու կազմակերպությունների հետ
		Լավ	Ուսումնական հաստատությունը մասնակիորեն է համագործակցում է շահառու կազմակերպությունների հետ:
		Անբավարար	Ուսումնական հաստատությունը չի համագործակցում շահառու կազմակերպությունների հետ:
10	Ծնողական համայնքի հետ համագործակցային հարաբերությունների խորացում և շարունակականության ապահովում	Գերազանց	Ծնողական համայնքի հետ առկա է սերտ և շարունակական համագործակցություն
		Լավ	Ծնողական համայնքի և հետ համագործակցությունը ոչ հաճախակի է
		Անբավարար	Ծնողական համայնքի հետ համագործակցություն խստ հազվադեպ է
11	Դպրոցում իրականացվում է արտադպրոցական և երկարօրյա ուսուցում	Գերազանց	Արտադպրոցական և երկարօրյա ուսուցումն իրականացվում է լիարժեքորեն՝ հիմնված սովորողների կրթական կարիքների վրա
		Լավ	Արտադպրոցական և երկարօրյա ուսուցումն իրականացվում է՝ ուղեկցվելով որոշակի դժվարություններով
		Անբավարար	Արտադպրոցական և երկարօրյա ուսուցում դպրոցում չի իրականացվում
12	Օտարման և հալածանքի կանխարգելում	Գերազանց	Հաստատությունում տիրում է առողջ բարոյահոգեբանական մթնոլորտ, հալածանք և օտարում առկա չէ:
		Լավ	Ժամանակին բացահայտվում և կանխարգելվում են օտարման և հալածանքի դեպքերը
		Անբավարար	Օտարման և հալածանքի դեպքերը չեն բացահայտվում և չեն կանխարգելվում
13	Բռնության բացահայտում, կանխարգելում	Գերազանց	Հաստատությունում բռնություն առկա չէ, տարվում են միայն կանխարգելիչ աշխատանքներ
		Լավ	Ժամանակին բացահայտվում և կանխարգելվում են բռնության դեպքերը

		Անբավարար	Բռնության դեպքերը չեն բացահայտվում, բռնարարները չեն պատժվում
14	Բարեվարքությունն ու մարդասիրությունը դպրոցում	Գերազանց	Կրթական գործընթացի բոլոր մասնակիցները բարեվարք են, հանդուրժող և բարյացկամ միմյանց նկատմամբ
		Լավ	Կրթական գործընթացի մասնակիցների հիմնական մասը բարեվարք է, հանդուրժող և բարյացկամ միմյանց նկատմամբ
		Անբավարար	Կրթական գործընթացի մասնակիցները հանդուրժող չեն, բարոյահոգեբանական մթնոլորտը դպրոցում անառողջ է

4.3 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ

Դպրոցի զարգացման ծրագրի գնահատումը ծրագրի գործողություններով պլանավորած և իրականացված արդյունքների համեմատման գործընթացն է: Որպես գնահատման գործիքներ պետք է ծառայեն յուրաքանչյուր գործողության առանձնահատկությունից բխող ցուցանիշները, որոնց միջոցով պետք է չափվեն ակնկալիքների կատարողականները, այլ կերպ ասած, դպրոցի զարգացման ծրագիրն իրականացնող ու վերահսկող շահառուների՝ (դպրոցի կառավարման և խորհրդակցական մարմինները) գործողությունների արդյունքներից բավարարվածության աստիճանը: Ցուցանիշները ամբողջացնում, ամփոփում են մեծ ծավալի վիճակագրական տվյալները և տալիս են իրավիճակի ընդհանուր պատկերը:

Ցուցանիշները անհրաժեշտ են նաև ժամանակի ընթացքում դպրոցի գործունեության մեջ տեղի ունեցող փոփոխությունները, ուղղությունները բացահայտելու և գնահատելու համար: «Հանրակրթության մասին» օրենքով նախատեսված է դպրոցի գործունեության գնահատման մեխանիզմը: Ուսումնական հաստատության գործունեությանը տրվում է ներքին և արտաքին գնահատական: Ներքին գնահատումը դպրոցի կողմից իր գործունեության վերլուծությունն է: Ներքին գնահատմանը մասնակից դարձնել վարչական և մանկավարժական աշխատողներին, սովորողներին և ծնողներին:

Ուսումնական հաստատության ներքին և արտաքին գնահատումն ուղղորդել սովորողին մատուցվող կրթական ծառայությունների որակի բարձրացմանը: Դպրոցի զարգացման ծրագրի վերահսկողությունը իրականացնում է դպրոցի խորհուրդը՝ հանրակրթության ոլորտը կանոնակարգող օրենսդրության համաձայն: Ծրագրի իրականացման վերահսկողության ամենաարդյունավետ միջոցը 5-ամյա ծրագրի հիման վրա կազմված դպրոցի գործունեության տարեկան աշխատանքային պլանների կատարողականներն են: Դպրոցի զարգացման ծրագրի վերահսկողության արդյունավետ միջոցառումներ են.



- դպրոցի խորհրդի կողմից առնվազն տարեկան երկու անգամ դպրոցի տվյալ ուստարվա աշխատանքային ծրագրում ընդգրկված դպրոցի զարգացման ծրագրի դրույթների կատարողականների հաշվետվությունների քննարկումը և համապատասխան գնահատականների ամրագրումը
- դպրոցի խորհրդի կողմից տնօրենին խորհրդատվական և այլ աջակցության շարունակական տրամադրումը
- համայնքի և դպրոցի այլ շահառուների՝ դպրոցի զարգացման ծրագրի իրականացման աշխատանքներին կամ այդ շրջանակում կազմակերպված միջոցառումներին շարունակական ներգրավումը
- դպրոցի խորհրդի մասնակցությունը տնօրենության կողմից դպրոցի զարգացման ծրագրի արդյունքների գնահատմանը, ⎫ զարգացման ծրագրի հաստատում մանկավարժական և կառավարման խորհուրդների կողմից
- յուրաքանչյուր ուստարվա սկզբին տարեկան աշխատանքային պլանի մշակում
- յուրաքանչյուր տարվա ավարտին ծրագրի վերանայում՝ ըստ ներքին գնահատման արդյունքերի
- յուրաքանչյուր ուստարվա սկզբին վերանայված ծրագրի հաստատում մանկավարժական և կառավարման խորհուրդների կողմից: Ժամանակի պահանջներից և իրավիճակներից ելնելով՝ սույն ծրագիրը ենթակա է լրամշակման և փոփոխման

Մեր դպրոցը կշարունակի լինել դպրոց բոլորի համար: Այս հարցում ելակետային պետք է համարել այն մոտեցումը, որ յուրաքանչյուր աշակերտ ունակ է սովորելու, սակայն յուրաքանչյուրն ունի զարգացման իր յուրատկություններն և սովորելու իր նախընտրած ուղին, և դպրոցը կլինի այն փարոսը, որը կուղեկցի նրան դեպի լուսավոր ապագա:

ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՄԵՆԱՄՅԱ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐՆ ՈՒ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

№	ՆՊԱՏԱԿՆԵՐԻՆ ՈՒՂՂՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՀԻՄՔԵՐԸ	ՉԿԱՏԱՐՎԱԾ ԿԱՄԹԵՐԻ ԿԱՏԱՐՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	ԴՐԱՆՑ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ	ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐԻ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ	ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԵՏՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ
1					
2					
3					
4					
5					

ՀԱՎԵԼՎԱԾ

https://disk.yandex.ru/i/-MQ93Om18xm4lw